

Հարավային Կովկասում

2013-2016 թթ..

Շվեյցարական համագործակցության

ռազմավարությունը

Շվեյցարիայի Համադաշնություն

Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալություն (ՇԶՀԳ)

Տնտեսական հարցերով պետական քարտուղարություն (ՏՀՊՔ)

Քաղաքական հարցերով տնօրինություն (ՔՀՏ)

Ներածություն

Հարավային Կովկասը հանդիսանում է աշխարհաքաղաքականորեն կարևոր տարածաշրջան, որը գտնվում է Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում՝ ռազմավարականորեն կարևոր էներգետիկ ուղիների վրա: Խորհրդային Միության փլուզումից քսան տարի անց Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունները դեռևս կանգնում են զգալի խնդիրների առջև՝ կայուն և բուրրի հասանելի տնտեսական աճ և շարունակական խաղաղ ու բազմակողմանի հասարակություն ստեղծելու գործում: Միաժամանակ երեք երկրներն էլ ունեն զգալի մարդկային ռեսուրսներ, հարուստ մշակութային ժառանգություն և բարգավաճ ապագա ստեղծելու համար անհրաժեշտ տնտեսական ներուժ:

Տարածաշրջանում իր երկարատև ներկայության շնորհիվ Շվեյցարիան ամուր և վստահելի հարաբերություններ է ստեղծել Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի կառավարությունների և ժողովուրդների հետ: Վերջին տասնհինգ տարվա ընթացքում Շվեյցարիայի կողմից նախաձեռնված համագործակցության ծրագրերը նպաստել են թիրախային տարածաշրջանների բնակչության կենսապայմանների և հաստատությունների գործունեության բարելավմանը: Շվեյցարական դիվանագիտությունն օժանդակել և իր ծառայություններն է տրամադրել երկխոսության գործընթացներին և վստահության կառուցման միջոցառումներին՝ նպաստելու համար կառուցողական եղանակով տարածաշրջանում առկա

հակամարտությունների կարգավորմանը:

Շվեյցարիան պատրաստ է աջակցել երեք երկրներին իրենց տնտեսական զարգացման, պատշաճ կառավարման և մարդու անվտանգության կառուցման ճանապարհին: Հետևաբար, սույն 2013-2016 թթ. Հարավային Կովկասում Համագործակցության ռազմավարությունը հանդիսանում է Շվեյցարիայի կողմից տարածաշրջանում ժողովրդավարությանը, խաղաղությանը և բարգավաճմանն օժանդակելու իր պատրաստակամության դրսևորումը: Շվեյցարիան կտրամադրի տեխնիկական օժանդակություն և մարդասիրական օգնություն, կխթանի խաղաղությունը, մարդու իրավունքները և վստահության կառուցման միջոցառումները, որոնցից յուրաքանչյուրը լրացնում և փոխադարձորեն ուժեղացնում է մյուսին: Ընդհանուր առմամբ Շվեյցարիան տարածաշրջանում տարեկան կներդնի մոտավորապես 28 միլիոն շվեյցարական ֆրանկ:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇԶՀԳ-ն), Տնտեսական հարցերով պետական քարտուղարությունը (ՏՀՊԲ-ն) և Քաղաքական հարցերով տնօրինությունը (ՔՀՏ-ն) մշակել են սույն ռազմավարությունը՝ նախանշելով գործունեության հիմնական ոլորտները, որոնք համահունչ են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների բարեփոխումների ծրագրերին:

Շվեյցարիան կնպաստի
 Հարավային Կովկասում տնտեսական
 շրջանակային պայմանների
 բարեփոխմանը, մասնավոր հատվածի
 հզորացմանը և գյուղատնտեսության
 արտադրողականության
 բարձրացմանը: Տեխնիկական
 օգնության միջոցներով կզարգանան
 կենտրոնական և տարածաշրջանային
 կառավարական հաստատությունների
 կարողությունները: Ի լրումն դրան,
 Շվեյցարիան կշարունակի տրամադրել
 մարդասիրական օգնություն՝ ուղղված
 բնակչության խոցելի խմբերի
 ինտեգրմանը, և, միաժամանակ
 կշարունակի իր ջանքերը մարդու
 անվտանգության և տարածաշրջա-
 նային հակամարտությունների
 վերափոխման բնագավառներում:

Շվեյցարիայի նախագահությունը
 ԵԱՀԿ-ում 2014 թ. լրացուցիչ
 հնարավորություն կընձեռի օժանդակել
 այս ոլորտների առաջընթացին:

Մենք համոզված ենք, որ սույն
 ծրագրում դրված նպատակներն ու
 գերակայությունները հանդիսանում են
 Հարավային Կովկասի
 տարածաշրջանի հետագա
 տնտեսական, քաղաքական և
 սոցիալական զարգացման ու
 Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի
 ժողովուրդների բարեկեցության
 հիմնական նախադրյալները:

Բեռն, 2012թ. դեկտեմբեր

Իվ Ռոսյե Պետքարտուղար ՔՀՏ-ի Ղեկավար	Մարտին Դահինդեն Դեսպան ՇՁՀԳ-ի Գլխավոր տնօրեն	Մարի-Գաբրիել Ինեխեն- Ֆլեյշ Պետքարտուղար ՏՀՊՔ-ի Տնօրեն
---	--	--

Հապավումների ցանկ

ԱՄ	Ադրբեջանական մանաթ
ՇՎՖ	Շվեյցարական ֆրանկ
ՔՀՏ	Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարության Քաղաքական հարցերով տնօրինություն
ԱՌՆ	Ադետների ռիսկերի նվազեցում
ՏՀԿՀ	Տնտեսական հարցերի, կրթության և հետազոտությունների դաշնային բաժին
ՀՆԹՆ	Հանքարդյունաբերական թափանցիկության նախաձեռնություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԱԳՆ	Արտաքին գործերի դաշնային նախարարություն
ՀՆԱ	Համախառն ներքին արտադրանք
ՄԱԲ	ՔՀՏ-ի Մարդու անվտանգության հարցերով բաժին
ԿԽՄԿ	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ՆՏԱ-ինք	Ներքին տեղահանված ազգաբնակչություն
մլն	Միլիոն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՇՀԳ	Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության գրասենյակ
ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ՏՀՊՔ	Տնտեսական հարցերով պետական քարտուղարություն
ՓՄԶ-ներ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

Բովանդակություն

Ներածություն	3
Հապավումների ցանկ	4
Բովանդակություն	5
Գործադիր ամփոփում	6
1. Ենթատեքստը	7
2. Շվեյցարիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանի միջև համագործակցության նպատակը	10
3. Անցյալի նվաճումներն ու փորձը	11
3.1. Վերականգնում և վերակառուցում	11
3.2. Տնտեսական զարգացում և զբաղվածություն	12
3.3. Մակրոտնտեսական քաղաքականության աջակցություն	13
3.4. Շվեյցարական միջնորդություն և լավ ծառայություններ	14
4. Ազդեցությունը հետագա ծրագրի վրա	15
5. 2013-2016 թթ.. ռազմավարական կողմնորոշումը և գերակայությունները	16
5.1. Ընդհանուր նպատակը	16
5.2. «Տնտեսական զարգացման և զբաղվածության» ոլորտ	16
5.3. «Կառավարման և հանրային ծառայությունների» ոլորտ	17
5.4. «Մարդու անվտանգության և պաշտպանության» ոլորտ	18
5.5. Ոչ հիմնական ծրագրեր	19
6. Ծրագրի իրականացումն ու կառավարումը	21
6.1. Շվեյցարական հաստատությունների միջև համագործակցության սկզբունքները	21
6.2. Օգնության ձևերը և գործընկերները	21
6.3. Տարանց իկ թեմաները	22
6.4. Հակամարտությունների նկատմամբ զգայուն ծրագրի կառավարում	22
6.5. Ֆինանսական միջոցները	23
7. Կառավարում և մշտադիտարկում	24
Հավելված I` Արդյունքների շրջանակ	25
Հավելված II` Ֆինանսական պլանավորում	26

Գործադիր ամփոփում

Նախկին Խորհրդային միության անդամներ՝ Հարավային Կովկասի երեք հանրապետությունները, գտնվում են անցումային դժվար ժամանակաշրջանում, որտեղ առկա են հակամարտություններ և, որոնք խոչընդոտում են տարածաշրջանում բարեկեցության և կայունության ամրապնդմանը: Անցումը դեպի ժողովրդավարական համակարգեր և շուկայական տնտեսություն պահանջում է հետագա բարեփոխումների իրականացում Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի Հանրապետություններում, ինչն էլ պահանջում է, որ իշխանություններն ու հասարակությունները պատրաստ լինեն այդ փոփոխություններում:

Նախորդ տասնամյակի ընթացքում բոլոր երեք հանրապետություններն ունեցան բարձր տնտեսական աճ, որը, սակայն, զգալիորեն նվազեց 2008 թ. ծանր ֆինանսական և տնտեսական ճգնաժամերի պատճառով: Մինչ այժմ տնտեսական աճը Հայաստանում և Վրաստանում ազդեցություն չի ունեցել հասարակության լայն զանգվածների վրա, չնայած այն հանգամանքին, որ տեղի է ունեցել ժողովրդավարության և քաղաքացիական իրավունքների առաջընթաց, այնուամենայնիվ երեք երկրներից ոչ մեկը միջազգային դասակարգումներով չի դասվում ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխանող երկրների շարքին:

Շվեյցարիայի համագործակցությունը Հարավային Կովկասի հանրապետությունների հետ սկսվել է դեռ 1988թ. Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի

ժամանակ: Այդ ժամանակից ի վեր Շվեյցարիան հետզհետե մեծացրել է իր համագործակցությունը Հարավային Կովկասի երկրների հետ: Մի կողմից միմյանց լրացնող երկարաժամկետ տեխնիկական, ֆինանսական և մարդասիրական օգնությունը և խաղաղարար միջոցառումները, մյուս կողմից, դարձան Շվեյցարիայի Հարավային Կովկասի տարածաշրջանին տրամադրվող աջակցության արժեքը:

Հիմնվելով անցյալ տարիների փորձի վրա՝ Արտաքին գործերի դաշնային նախարարության (FDFA) Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇԶԳ) և Քաղաքական հարցերով Տնօրինությունը (ՔՐՏ) Տնտեսական հարցերի, կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (ՏՀԿՐ) Տնտեսական հարցերով պետական քարտուղարության (ՏՀՊՔ) հետ միասին մշակել են Հարավային Կովկասի համար նոր ծրագիր, որն արտացոլում է տարածաշրջանում Շվեյցարիայի ավելի լայն նախաձեռնությունները՝ կապված միջնորդության և բարի ծառայությունների հետ: Ընտրվել են երեք գերակա ոլորտներ, որոնց համար վերոնշյալ երեք շվեյցարական հաստատությունները տրամադրում են իրենց հիմնական կարողությունները՝ դրանով իսկ ամրապնդելով տարածաշրջանում կայուն զարգացման համար տրամադրվող Շվեյցարիայի օգնության համապարփակությունն ու արդյունավետությունը:

Ֆինանսավորման առումով՝ ամենամեծ ոլորտը տնտեսական զարգացման և զբաղվածության ոլորտն

է: Հիմնվելով Հարավային Կովկասում 2008-2012 թթ.. Շվեյցարական համագործակցության նախորդ ծրագրի վրա՝ շուկայի զարգացման համար ուշադրության կենտրոնում կլինի գյուղատնտեսական արժեքային շղթաների աջակցությունը, որտեղ ավելի մեծ ուշադրություն կդարձվի մասնագիտական գիտելիքների ամրապնդման, ֆինանսական և մասնավոր հատվածների գործունեության պայմանների բարելավման և բնակչության խոցելի խմբերի կենսապահովման համար աջակցության տրամադրման վրա: Երկրորդ՝ կառավարման նոր և հանրային ծառայությունների ոլորտներն ընտրվել են, որպեսզի արտացոլեն ազգային իշխանությունների դերը տարածքային զարգացմանը սատարելու գործում (ներառյալ աղետների կառավարումը) և հաշվի առնեն անցումային շրջանի այն գերակայությունները, համաձայն որի կառավարության ավելի ցածր հատվածներին ավելի շատ պարտականություններ են փախանցվելու՝ ավելի ժողովրդավարական գործընթացներ զարգացնելու և ավելի արդյունավետ և հաշվետու պետություն ստեղծելու համար: Երրորդ՝ մարդու անվտանգության և պաշտպանության նոր ոլորտը, բնակչության խոցելի խմբերի տարրական մարդասիրական կարիքներն ապահովելու հետ միասին, նախատեսում է աջակցություն նաև հակամարտությունների վերափոխման գործընթացներին, որը կարող է ավելանալ հակամարտության վերսկսման կամ մեծ բնական աղետի դեպքում: Շվեյցարիան միջնորդության, կապերի ստեղծման և քաղաքական երկխոսության միջոցով կկենտրոնացնի իր օգնությունը պաշտպանության,

վստահության և խաղաղության կառուցման վրա:

Հետապնդելով տարածաշրջանի ընդհանուր զարգացման նպատակ՝ Շվեյցարիան իր ծրագիրը կիրականացնի, հիմնականում, երեք երկրների մակարդակով՝ առանձին: Նա կշարունակի աշխատել տարբեր գործընկերների հետ, այդ թվում իշխանությունների հետ՝ պետական բոլոր մակարդակներում, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների հետ: Շվեյցարիայի կողմից զարգացման համար տրամադրվող պաշտոնական աջակցությունը համահունչ կլինի երեք երկրների կառավարությունների գերակայություններին և կտրամադրվի օգնության այնպիսի մեխանիզմների միջոցով, որոնք կարող են ձևափոխվել հակամարտության վերսկսման կամ մեծ բնական աղետի դեպքում:

2013-2016թթ.. Հարավային Կովկասի հետ համագործակցության ծրագրի իրականացման համար հատկացված ընդհանուր ֆինանսական միջոցները կկազմեն շուրջ 111 միլիոն շվեյցարական ֆրանկ (ՇՎՖ):

1. Ենթատեքստը

Հարավային Կովկասի երեք հանրապետությունները վերջին երկու տասնամյակների ընթացքում գտնվում էին անցումային դժվար շրջանում, որը առաջացրեց քաղաքական և սոցիալական անհանգստություն, կառավարման պակաս, տարբեր տարածաշրջաններում տարածքների անջատում և հակամարտություններ: Հայաստանն ու Վրաստանը դեռ չեն վերականգնել իրենց անցյալի տնտեսական հզորությունը: Անցումը խորհրդային համակարգից դեպի բազմակողմանի ժողովրդավարական հասարակություն և գործող շուկայական տնտեսություն հանդիսանում է անընդհատ և դժվար գործընթաց:

Հարավային Կովկասը գտնվում է Ռուսաստանի Դաշնության, Իրանի, Թուրքիայի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հատման կետում: Կասպից ծովի և Կենտրոնական Ասիայի նավթի և գազի պաշարները և դեպի Եվրոպա Հարավային Կովկասով անցնող նավթա և գազամուղերը՝ Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքը, ընդգծում են տարածաշրջանի աշխարհաքաղաքական կարևորությունը:

Հարավային Կովկասում տեղի են ունեցել տարածաշրջանային լուրջ հակամարտություններ՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի/Ցխինվալի տարածաշրջանի շուրջ: Այդ հակամարտությունների արդյունքում այսօր դեռ երեք հանրապետություններում կա շուրջ 1.2 միլիոն ներքին տեղահանվածներ և փախստականներ: Չնայած միջազգային միջնորդական ջանքերի

գործադրմանը՝ այդ հակամարտությունները մնում են չլուծված և շարունակում են խոչընդոտել տարածաշրջանի տնտեսական զարգացմանը և քաղաքական կայունությանը:

Հայաստանը մնում է բավականին մեկուսացված, քանի որ նրա սահմանները Ադրբեջանի և Թուրքիայի հետ փակ են: Երկիրն ունի բարեկամական հարաբերություններ Իրանի հետ, իսկ տնտեսական և քաղաքական առումներով՝ շարունակում է կախված մնալ Ռուսաստանի Դաշնությունից: Ադրբեջանը հետապնդում է բազմավեկտորային արտաքին քաղաքականություն: Վրաստանը ջանքեր է գործադրում Եվրո-Ատլանտյան ինտեգրման ուղղությամբ, Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան ակտիվորեն զարգացնում են տնտեսական համագործակցությունը:

Հայաստանի տնտեսությունը դանդաղ վերականգնվում է՝ շնորհիվ օրենսդրական բարեփոխումների, բարելավված գործարար միջավայրի և հումքի արտահանման ավելացման: Սակայն աղքատության և գործազրկության մակարդակը մնում է բարձր, հատկապես գյուղական վայրերում, որն էլ ավելին է բարձրացել վերջին տարիների ընթացքում: Դրսում աշխատող քաղաքացիների Հայաստան ուղարկվող տրանսֆերները և հայկական սփյուռքը կարևոր դեր են խաղում ընտանեկան եկամուտների և երկրում ներդրումների գործում: Բնամթերային գյուղատնտեսությունը մնում է զբաղվածության հիմնական ոլորտներից մեկը, որում ներգրավված է աշխատող բնակչության 45%-ից ավելին: Շուկայի ազատականացումը մեծ խնդիրներ առաջացրեց նախկինում

զգալիորեն սուբսիդավորվող գյուղատնտեսական ոլորտի համար, իսկ հակասող շահերը վտանգ են առաջացնում արդար մրցակցության համար: Քաղաքական մտնուլորթը մնում է բարդ: Միջազգային ոչ կառավարական «Ֆրիդոմ Զաուս» կազմակերպության գնահատականով Զայաստանը հանդիսանում է «մասամբ ազատ», իսկ մամուլը՝ «ոչ ազատ»: 2012 թ. մայիսի խորհրդարանական ընտրությունները բնութագրվել են մրցակցային, զանազան և հիմնականում խաղաղ նախընտրական ընտրարշավով:

Ադրբեջանի եկամուտը հիմնականում ստացվում է նավթի և գազի արտահանումից: 2000 թ-ների սկզբում արձանագրած նրա շոշափելի տնտեսական աճը դանդաղեց 2006 թվականից հետո՝ մասամբ նավթի արտադրության կրճատման արդյունքում: Դա արտացոլում է Ադրբեջանի տնտեսության մեծ կախվածությունը բնական ռեսուրսներից: Տնտեսությունը դիվերսիֆիկացնելու անհրաժեշտությունը ավելանում է: Ոչ նավթային ոլորտները, հատկապես՝ շինարարությունը, հեռահաղորդակցությունը և բանկային ծառայությունները, աստիճանաբար աճում են, սակայն դա հիմնականում ֆինանսավորվում է կառավարության նավթային ոչ կայուն միջոցներից: Գյուղատնտեսության ոլորտում զբաղված է բնակչության 40%-ը, սակայն կազմում է համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ-ի) միայն 5.2%: Զանաշխարհային Բանկի 2009 թ. «Դուլինգ Բիզնես» (Ձբաղվում են գործարարությանը) հաշվետվության մեջ Ադրբեջանը հայտարարվել է աշխարհի ամենաառաջին օրենսդրական դաշտի բարեփոխումներ

իրականացնողը, սակայն ազատ մրցակցությունը դեռ խաթարվում է: Մինչ Ադրբեջանը ձգտում է համապատասխանել Զանքաարդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (ՅՈՒՆ) և ներ է դրել որոշ ֆորմալ հակակոռուպցիոն միջոցառումներ, այն չարունակում է տառապել կոռուպցիայի բարձր մակարդակից: Ադրբեջանի բնակչությունը որոշ չափով օգտվում է բնական պաշարներից ստացվող մեծ եկամուտներից: Այս դրական զարգացումն արտացոլվում է երկրի կրճատվող աղքատության ցուցանիշով՝ 2003թ. 43.7%-ից իջնելով 7.6%-ի 2011թ.: Ներքին տեղահանվածները և փախստականները կազմում են բնակչության ամենա աղքատ և ամենա խոցելի մասը: Մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը Ադրբեջանում ենթարկվում էքննադատության, և 2003թվականից ի վեր երկիրը «Ֆրիդոմ հաուս» կազմակերպության կողմից դասվում է «ոչ ազատների» շարքում:

2003թ. Վրաստանի «Վարդե հեղափոխությունը», մի շարք կտրուկ բարեփոխումներով և համակարգային վերակառուցումով, լճացման և կոռուպցիայի տարների վերջը դրեց: Ակնհայտ առաջընթաց տեղի ունեցավ ժողովրդավարական ստանդարտների հետևելու և կիրառելու գործում, իսկ Վրաստանի կառավարությունը բացահայտ հետաքրքրություն է ցուցաբերում Եվրոպայի հանդեպ: Սակայն 2012թ. «Ֆրիդոմ հաուս» կազմակերպությունը որակեց Վրաստանը միայն «մասամբ ազատ երկիր: Դատական համակարգի անկախությունը մնում է մեծ խնդիր: 2008թ. Ռուսաստանի Դաշնության հետ զինված հակամարտությունը և այդ ժամանակահատվածի տնտեսական

ճգնաժամը մեծ բացասական ազդեցություն ունեցավ երկրի վրա: Սակայն վերջին մի քանի տարվա ընթացքում Վրաստանի տնտեսությունը դանդաղ վերականգնվում է՝ գրանցելով 5% աճ: Լայնածավալ բարեփոխումներ են իրականացվում հետևելով նեո-լիբերալ մոտեցումներին, ներառյալ՝ սոցիալական ծառայությունները: Գյուղատնտեսությունը մնում է մեծագույն աճի ներուժ ունեցող ոլորտներից մեկը, որում զբաղված է ընդհանուր աշխատունակ բնակչության գրեթե կեսը: Գալիք տարիների ընթացքում գյուղական աղքատությունը կմնա Վրաստանի համար որպես մեծ մարտահրավեր: Եկամուտների միջև ճեղքվածքը մեծանում է, և երկիրը տարածաշրջանում ամենամեծ Gini ցուցանիշն ունի: Չնայած ներքին տեղահանված բնակչության ապրուստի պայմանները հաստատականորեն լավանում են, սակայն շատ դեպքերում նրանք չեն կարողանում լիովին օգտվել իրենց սոցիալական և տնտեսական իրավունքներից և տուժում են աշխատատեղերի բացակայությունից: Ներքին տեղահանվածները դեռևս պատկանում են Վրաստանի բնակչության ամենա խոցելի խմբին: 2012թ. հոկտեմբերի խորհրդարանական ընտրությունները մատնանշեցին Վրաստանի հետխորհրդային շրջանի ամենա ժողովրդավարական ձևով իշխանության փոխանցումը, որի արդյունքում համատեղ գործում են և Նախագահը և Վարչապետը: Նոր կոալիցիոն կառավարությունը հայտարարեց իր մտադրության մասին ուշադրություն դարձնելու գյուղական զարգացման վրա և բարելավելու Ռուսաստանի Դաշնության հետ տնտեսական հարաբերությունները՝ որպես հիմնական շուկա:

Բոլոր երեք երկրներում վերարտադրողական առողջության, հզորացման և աշխատաշուկայի ոլորտներում գեներային անհավասարության արդյունքում բաց են թողնվել տնտեսական զարգացման համար անհրաժեշտ հնարավորությունները: Ազգային կառավարությունները նույնպես քաջատեղյակ են պարտականությունների և գործառույթների ապակենտրոնացման և տեղական իշխանություններին հանձնելու անհրաժեշտության մասին: Տեղական ինքնակառավարման բարեփոխումները մեծ կարևորություն ունեն Չայաստանի և Վրաստանի համար, սակայն դրանց առաջընթացը դեռ չի ընթանում: Ադրբեջանի համար համայնքների հզորացումը առաջնային խնդիր չէ:

Տարբեր բնապահպանական գոտիների առկայությունը Հարավային Կովկասում, մեծ սեյսմիկ ակտիվությունը և կլիմայի փոփոխությունը խոցելի են դարձնում տարածաշրջանը՝ բնական աղետների տեսանկյունից: Միայն իշխանությունների արձագանքից դեպի ավելի ինտեգրացված աղետների կառավարման համակարգին դանդաղ անցումը ավելացնում է բնակչության մեծ խոցելիությունը:

Անցումային շրջանի գերակայությունները

2013-2016թթ.. Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության ռազմավարությունը համահունչ է համապատասխան կառավարությունների բարեփոխումների գերակայություններին և ուղղված է

աջակցելու վերջիններիս լրացնել անցումային շրջանի բացերը:

2010-2020թթ. Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության մեջ Հայաստանը մատնանշում է արդյունավետության և արտադրողականության բարձրացման անհրաժեշտությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների անկախությունը հռչակված է Հայաստանի ազգային օրենսդրության մեջ, որը համահունչ է ժողովրդավարության և Տեղական ինքնակառավարման Եվրոպական հռչակագրի սկզբունքներին: Սակայն, իրականում, Հայաստանը մնում է կենտրոնացված երկիր, իսկ տեղական իշխանություններին տրամադրվող միջոցները բավարար չեն, որպեսզի նրանք անկախ լինեն և իրականացնեն իրենց հանձնարարված գործառնությունները: Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը (ԱՌՆ) մշակվել է 2012թ., որտեղ Հայաստանի կառավարությունը հայտարարել է միջազգային չափանիշներին համապատասխան ապակենտրոնացված փրկարար համակարգի հզորացմանն ուղղված իր գերակայության մասին:

Ադրբեջանի 2008-2015թթ.. Աղքատության կրճատման և կայուն զարգացման պետական ծրագիրը մատնանշում է կայուն տնտեսական զարգացման կարևորությունը, հատկապես մակրոտնտեսական կայունությունը՝ պահպանելով և ապահովելով ոչ նավթային ոլորտի հավասարակշռված զարգացումը: Գերակայությունները ներ են առնում ոչ նավթային ոլորտի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, մրցակցության խթանումը և

սահմանամերձ շրջանների միջև առևտրի խթանումն ու ֆինանսական ոլորտի բարեփոխումները: Մեկ այլ կիզակետում կլինի կառուցվածքային և պատշաճ կառավարմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, հատկապես՝ հանրային ոլորտում:

Վրաստանում կառավարությունը հաստատել է նոր 2012-2022թթ.. Գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը և որոշում է կայացրել շոշափելի ֆինանսական միջոցներ հատկացնել այդ ոլորտին՝ շեշտը դնելով փոքր և միջին ֆերմերներին վարկերի տրամադրման վրա, որը կօգնի նրանց գյուղատնտեսական սարքավորումներ, նյութեր ու պարագաներ գնել և պահեստային հարմարություններ ստեղծել: Ֆերմերների և խորհրդատվական ծառայություններ մատուցողների մասնագիտական կրթությունը կազմում է Գյուղատնտեսության զարգացման ռազմավարության իրականացման գործողությունների պլանի մի մասը: Վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացվել են բարեփոխումներ, որոնք ուղղված են հզորացնելու տեղական ինքնակառավարման համակարգը, որն էլ հանդիսանում է դեպի ժողովրդավարական հասարակություն անցնելու ժամանակաշրջանի ռազմավարական գերակայություններից մեկը: 2011թ. մշակվել և հաստատվել է 2010-2017թթ.. Վրաստանի Տարածքային զարգացման պետական ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիրը: Որոշ հիմնական ազգային քաղաքական փաստաթղթեր աղետների ռիսկի նվազեցումը և շրջակա միջավայրի խնդիրները ներառնում են, որպես տարանցիկ թեմաներ: Վրաստանի 2012-2014թթ..

վերանայված ներքին տեղահանված անձանց վերաբերյալ գործողությունների ծրագիրը շեշտը դնում է ներքին տեղահանված բնակչության սոցիալ-տնտեսական ինտեգրացման վրա, նրանց ապրուստի պայմանների կայուն բարելավման և մարդու իրավունքների վերաբերյալ իրենց իրազեկման վրա: Միացյալ Ազգերի Կանանց հանդեպ ցանկացած տեսակի խտրականության վերացման կոնվենցիայի վավերացումից հետո (CEDAW) Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը որոշ առաջընթաց են կատարել՝ բարելավելով գենդերային խնդիրներին վերաբերող իրենց օրենսդրական շրջանակները: Սակայն գենդերային հավասարությունը խթանելու են ուղղված իրական քաղաքականությունների իրականացումը մնում է որպես մեծ հիմնախնդիր, նաև եղած ավանդույթների գերակայության պատճառով: Հայաստանի և Վրաստանի գործողությունների ազգային պլանները շեշտադրումը դնում են քաղաքական և կառավարման համակարգերում կանանց ներկայացվածության ավելացման վրա, ինչպես նաև՝ նրանց տնտեսական կյանքում մասնակցության խթանման վրա: Ադրբեջանի Ընտանեկան և կանանց հարցերին վերաբերող գործողությունների ազգային պլանի կիզակետում սոցիալական ապահովության խնդիրներն են:

Եվրոպական Միությունը (ԵՄ) և Համաշխարհային բանկը Հարավային Կովկասում ամենախոշոր բազմակողմանի դոնորներն են: Իր Արևելյան գործընկերության ծրագրում Եվրոպական Միությունը հետապնդում է տարածաշրջանային մոտեցում, առաջարկելով բոլոր երեք հանրապետություններին նույն

հնարավորությունները: Այլ միջազգային կազմակերպությունները, օրինակ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության հազմակերպությունը (ԵԱՀԿ) և Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ) նույնպես հետաքրքրություն ունեն աշխատել տարածաշրջանում: ԱՄՆ-ն շարունակում է աջակցել Վրաստանին: Գտնվելով միջին եկամուտ ունեցող երկրների ցանկի վերին մասերում, Ադրբեջանը ստանում է սահմանափակ ֆինանսական օգնություն: Ավելի շուտ նա ձգտում է ունենալ տեխնիկական գիտելիքներ և ինստիտուցիոնալ գործընկերություն: Մարդասիրական դոնոր կազմակերպությունները հետզհետե լքում են Հարավային Կովկասի տարածաշրջանը:

2. Շվեյցարիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանի միջև համագործակցության տրամաբանական հիմնավորումը

Հարավային Կովկասը, իր կարևոր աշխարհաքաղաքական տեղակայությամբ (Եվրոպայի և Ասիայի խաչմերուկ), մնում է որպես ուշադրության կարիք ունեցող փխրուն տարածաշրջան: Շվեյցարիայի ներգրավվածությունը Հարավային Կովկասում արտահայտվում է հակամարտության փոխակերպման և խաղաղության ջանքերի համար բարի դրացական ծառայությունների տրամադրմամբ: Շվեյցարիան ունի դիվանագիտական մանդատ պաշտպանելու Ռուսաստանի շահերը Վրաստանում և հակառակը: Շվեյցարիայի և երեք երկրների միջև գոյություն ունի տնտեսական համագործակցության ավելացման զգալի ներուժ՝ հատկապես գյուղատնտեսության, մեքենաշինության, թանկարժեք

մետաղների, ֆինանսական ծառայությունների, էներգետիկայի և զբոսաշրջության բնագավառներում: Ադրբեջանը հանդիսանում է Բրետոն Վուդյան հաստատությունների (Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի) և Համաշխարհային բնապահպանական ծրագրի շվեյցարական խմբի անդամ:

Շվեյցարիայի օգնությունը Հարավային Կովկասի տարածաշրջանին սկսվել է դեռ 1988թ. Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո: ՇՁՀԳ-ն և ՏՀՊԲ-ն ներկայացնող Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության տարածաշրջանային գրասենյակը (ՇՀԳ) հիմնվել է Թբիլիսիում 1999թ.: ՇՁՀԳ-ն առաջին զարգացման գործակալություններից էր, որ ներդրում կատարեց գյուղական տնտեսական զարգացման ոլորտում և հայտնի է Վրաստանում և Հայաստանում հակամարտություններից և բնական աղետներից տուժած բնակչությանը տրամադրվող իր հատուկ կերպով մշակված աջակցության համար: ՏՀՊԲ-ն հայտնի է Ադրբեջանում ոչ նավթային ոլորտի զարգացմանն ուղղված և ավելի թափանցիկ ու հաշվետու կերպով իր շահույթը կառավարելու աջակցության համար: Շվեյցարական համագործակցության արժեքը բարձր է գնահատվել այլ դոնորների կողմից, որոնք միացել են ՇՁՀԳ-ի ծրագրին համագործակցության պատվիրակված համաձայնագրի կամ գրասենյակային տարածքը կիսելու միջոցով:

Շվեյցարիայի կողմից առաջարկվող փորձաքննությունը դեռևս պահանջարկ ունի և կարող է գալիք տարիների ընթացքում զգալի ներդրում ունենալ երեք երկրների անցումային շրջանի նպատակների նվաճմանը`

հիմնականում շուկայական տնտեսության և ժողովրդավարության խթանման բնագավառներում: 2013-2016թթ.. Հարավային Կովկասի հետ Համագործակցության ռազմավարությունն արտացոլում է 2012-2016թթ.. համար Շվեյցարիայի արտաքին քաղաքական ռազմավարության չորս գերակայություններից մեկը (նպաստել միջազգային կայունությանը) և Շվեյցարական արտաքին տնտեսական ռազմավարության հիմնասյուններից մեկը (նպաստել գործընկեր երկրների տնտեսական զարգացմանը): Համագործակցության ռազմավարության մեջ նշված երեք ոլորտները լիովին համահունչ են 2013-2016թթ. Միջազգային համագործակցության մասին Խորհրդարանին ուղղված Դաշնային խորհրդի ուղերձին և 2012-2016թթ.. Քաղաքացիական խաղաղության կառուցմանը և մարդու իրավունքների խթանմանն ուղղված միջոցառումների շարունակության մասին Խորհրդարանին ուղղված ուղերձին: Քանի որ Համագործակցության ռազմավարությունը համընկնում է 2014թ. ԵԱՀԿ-ում Շվեյցարիայի նախագահության հետ, Հարավային Կովկասում կխթանվեն Շվեյցարական համագործակցության ծրագրի և ԵԱՀԿ-ի նախաձեռնությունների միջև փոխադարձ կապերը:

3. Նախկինի նվաճումներն ու փորձը

2008-2012թթ.. Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության ռազմավարության շրջանակներում ՇՁՀԳ-ի և ՏՀՊԲ-ի ծրագիրը հինգ տարվա համար, մոտավորապես 90 միլիոն շվեյցարական ֆրանկ ընդհանուր բյուջեով, հիմնված էր

հետևյալ երեք ոլորտների վրա՝ «Վերականգնում և վերակառուցում», «Տնտեսական զարգացում և զբաղվածություն» և «Մակրոտնտեսական քաղաքականության աջակցություն»։ Չնայած այն փաստին, որ այդ ժամանակահատվածում ՔՀՏ-ի կողմից տրամադրվող բարի դրացիական հարաբերությունների խթանման ծառայությունները նախկին Համագործակցության ռազմավարության մաս չէին կազմում, դրանք նույնպես հակիրճ ներկայացված են ստորև։

3.1. Վերականգնում և վերակառուցում

Կարիքներին համապատասխանող բնակարանային խնդրի լուծումների արդյունքում Վրաստանում և Հայաստանում զգալի կերպով բարելավվել են հակամարտությունների արդյունքում տուժված 1՝800 մարդկանց ապրուստի պայմանները։ Նոր եկամուտներ վաստակելու հնարավորությունները և համայնքային ենթակառուցվածքների փոքր նորոգման աշխատանքները անջատողական Աբխազիայի և Սամեգրելոյի որոշ գյուղերում, նույնպես, նպաստեցին Վրաստանում կարիքավոր բնակչության սոցիալ-տնտեսական ինտեգրացման և բարեկեցության խթանմանը։ Հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքական երկխոսության վրա, որը նպաստեց Վրաստանում 2012-2014թթ. ներքին տեղահանված բնակչությանը վերաբերող գործողությունների պլանի մշակմանը և Հայաստանում բնակչության կարիքավոր խմբերի ապրուստի պայմանների բարելավմանը վերաբերվող օրենքի նախագծի մշակմանը։

Փորձը ցույց տվեց, որ հակամարտության երկու կողմերի բնակչության խոցելիությունն ավելի բարձր է, իսկ կացարանների տրամադրման և ապրուստի պայմանների բարելավման համակցությունը համայնքային ենթակառուցվածքների նորոգման հետ անհրաժեշտ է հակամարտություններից և բնական աղետներից տուժված բնակչության արժանապատիվ ապրուստի պայմաններ ունենալու, ինքնաապահովման և սոցիալ-տնտեսական ինտեգրացման համար։ Արձագանքելով ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զլխավոր հանձնակատարի գրասենյակի (UNHCR) և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ICRC) ուղերձներին՝ Շվեյցարիան իր աջակցությունն է ցուցաբերել Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում հակամարտությունների արդյունքում տուժված բնակչության պաշտպանվածության բարելավմանը։ 2008թ. օգոստոս ամսին Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի միջև տեղի ունեցած պատերազմի ժամանակ տրամադրվել է լրացուցիչ աջակցություն։

Հայաստանում ողջ երկրի մասշտաբով հիմադրվել է ապակենտրոնացված փրկարարական համակարգ և այժմ 2՝400 հրշեջ/փրկարարներ և կամավորներ, ինչպես նաև՝ 140 բուժաշխատողներ պատրաստ են, աղետի դեպքում, տրամադրել ավելի լավ հիմնական փրկարարական օգնություն։ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ի վիճակի է ավելի արդյունավետ արձագանք ցուցաբերել։

Վրաստանում վեց համայնքապետարաններ բարելավել են իրենց աղետների կառավարման կարողությունները և կարող են ավելի համարժեք կերպով արձագանքել տեղական աղետներին: Բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավելով և Ներքին գործերի ու Բնապահպանության նախարարությունների հետ համատեղ աղետների ռիսկերի նվազեցման թեմայով և դրան վերաբերող քաղաքականության հարցերի շուրջ կազմակերպված մի շարք կլոր սեղանների միջոցով՝ Շվեյցարիան նպաստեց Վրաստանում աղետների ռիսկերի նվազեցման հարցերի վերաբերյալ իրազեկման բարձրացմանը և այդ ոլորտում ավելի լավ համակարգմանը:

Համատեղելով տրամադրվող աջակցությունը տեղական և ազգային մակարդակներում և շեշտը դնելով պատրաստվածության և պաշտպանվածության վրա՝ աղետների հետևանքների մեղմացումն ավելի քան կարևոր է, որը կնպաստի Հայաստանում և Վրաստանում դեպի ավելի ինտեգրացված աղետների կառավարման համակարգին անցմանը:

3.2. Տնտեսական զարգացում և զբաղվածություն

Հարավային Կովկասին նախկինում տրամադրված Շվեյցարիայի աջակցությունը բաղկացած էր նպատակաուղղված օգնությունից, որը կիրառվում է շուկայի զարգացման մոտեցումը անասնապահության և մրգի արտադրության արժեքային շղթաների համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ընտրված տարածաշրջաններում 148'000

մարդ անմիջականորեն օգտվել են Շվեյցարիայի կոմից տրամադրված օգնությունից, որի շնորհիվ ստեղծվել են 500 –ից ավելի նոր աշխատատեղեր: Մինչ այժմ խթանվել են անասնաբուծության ավելի ժամանակակից մեթոդները և բարելավվել են ֆերմերների և միջնորդների միջև կապերը: Օրինակ՝ այժմ ավելի լավ է գործում կաթի տեղափոխումը դեպի կաթի հավաքման կետեր և վերամշակող գործարաններ: Պանրի որոշ պահեստներին տրամադրվել են սարքավորումներ, իսկ գյուղատնտեսական նյութերը և պարագաները ձեռք են բերվել թիրախային համաֆինանսավորման եղանակով: Նման տեսակի օգնության արդյունքում բարելավվել է կաթի և մսի արտադրությունը, իսկ մսից և կաթից պատրաստված մթերքները վաճառվում են տեղական շուկայում, որի շնորհիվ վերջին չորս տարվա ընթացքում թիրախային ֆերմերների եկամուտները ավելացել են 20%-ով: Հայաստանում և Վրաստանում Շվեյցարիան նույնպես կարողացել է խթանել պետական և մասնավոր հատվածների տեղական գործընկերությունը, որտեղ կաթ վերամշակող ընկերությունները և կաթի արտադրամասերը պարտավորվել են կանոնավոր կերպով գնել կաթը փոքր ֆերմերներից և տրամադրել նրանց համապատասխան խորհրդատվական ծառայություններ և սարքավորումներ, իսկ ֆերմերները, իրենց հերթին, համաձայնվել են մատակարարել կաթի հուսալի քանակ և որակ: Ընտրված որոշակի մրգերի արժեշղթայում (թուզ, արքայանարինջ, նուռ և ելակ)

շվեյցարական աջակցության շնորհիվ ստեղծվել են առաջին խոստումնալից գործարար կապերը շուկայի դերակատարների միջև, նոր ծառայությունները դարձել են հասանելի, իսկ ֆերմերները կարողացել են ավելացնել իրենց արտադրությունը՝ ներդրված տնտեսվարման և կառավարման նոր մեթոդների շնորհիվ: Շվեյցարիային հաջողվել է Վրաստանում կառավարության ուշադրությունը հրավիրել ներառական գյուղատնտեսական զարգացման կարևորության վրա: Այսպիսով՝ գյուղատնտեսությունը նորից բարեփոխումների ուշադրության կենտրոնում է և այլ դոնոր-կազմակերպություններ որոշել են, համատեղ ծրագրերի միջոցով, միանալ Շվեյցարիային՝ Վրաստանում գյուղատնտեսության ոլորտին աջակցելու համար: Աղետների ռիսկերի նվազեցումը դարձավ չափազանց կարևոր լրացում շուկայի զարգացմանն ուղղված աջակցությանը, քանի որ բնական աղետները առաջինն են, որ ֆերմերներին վնաս են հասցնում: Տարածաշրջանային իշխանություններին օգնություն է տրամադրվել աղետների ռիսկերի զնահատում և բնակչության իրազեկում կատարելու նպատակով, ինչպես նաև փոքր ծավալի ենթակառուցվածքները բարելավելու, արոտների կառավարում իրականացնելու, անասունների ռեգիստր վարելու և հիվանդությունների վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ թիրախային տարածաշրջաններում կանայք կարողացել են բարելավել իրենց սոցիալական և տնտեսական կարգավիճակը շուկայի համակարգի

հզորացման շնորհիվ, որը ռեսուրսների հասանելիությունը և վերահսկողությունը դարձնում է ավելի հավասար:

Հայաստանի և Վրաստանի կառավարությունները իրենց բարեփոխումների ուշադրության առաջին տեղում դրել են գյուղատնտեսությունը: Այս քաղաքական ընտրությունը լավ հիմք է հանդիսանում կառավարական գործընկերների հետ շարունակական համագործակցության համար: Փորձը ցույց է տվել, որ, մասնավոր գործընկերների հետ աշխատելու հետ մեկտեղ, կարևոր է հզորացնել տարածաշրջանային և համայնքային իշխանություններին, որպեսզի նրանք կարողանան խթանել տեղական տնտեսական զարգացումը և տրամադրեն խորհրդատվական ծառայություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արհեստական սերմնավորումը և հիվանդությունների վերահսկումը:

Ադրբեջանում շվեյցարական օգնությունն ուղղված է նպաստավոր և ռիսկերի մասին իրազեկգործարար միջավայր ստեղծելուն, որը կնպաստի երկրի եկամտի աղբյուրի բարելավմանը և դիվերսիֆիկացմանը: Շարունակություն են ստացել այնպիսի կարևոր բարեփոխումներ, որոնք կապված են բիզնեսի գրանցման գործընթացների, թույլտվությունների և ստուգումների հետ: Ընդունվել է Ազգային կորպորատիվ կառավարման օրենսգիրքը և 32 ընկերություններ և բանկեր բարելավել են իրենց ֆինանսական գործունեությունը և ներգրավել են ավելի քան 132

միլիոն ամերիկյան դոլարի արտաքին ներդրումներ: Ավելին, բիզնեսի գրանցման մեկ պատուհանի մոդելը հաջողությամբ իրականացնելու և ինտերնետով բիզնեսի գրանցումը ներդնելու արդյունքում, Ադրբեջանի մասնավոր հատվածը ունեցավ տարեկան 23 միլիոն ԱՄՆ դոլարի չափով խնայողություններ՝ վարչական վճարների և գործընթացների կրճատման հետ կապված: AzerPost-ին տրամադրված տեխնիկական օգնության արդյունքում զգալիորեն ավելացել է ավտոմատացված ֆինանսական գործարքների ծավալը՝ 2005թ. 72 միլիոն ադրբեջանական մանաթից աճելով և հասնելով 386 միլիոն ադրբեջանական մանաթի՝ 2010թ.: Աջակցություն է ցուցաբերվել սպառողների պաշտպանության և ֆինանսական կրթման գործողությունների ծրագրի մշակման և Կենտրոնական բանկի կողմից սպառողների պաշտպանության բաժնի ստեղծման համար: Վերջապես՝ Շվեյցարիայի կողմից հովանավորված ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի միջոցով լավացել է Գյանջա և Շեքի քաղաքների ջրամատակարարումը, որի արդյունքում այժմ խմելու ջուրը հասանելի է դարձել այդ քաղաքների բնակչության 90%-ի համար: Փորձը ցույց տվեց, որ չափազանց կարևոր է լավացնել գործարարների կարողությունները և բարձրացնել բնակչության իրազեկման աստիճանը նոր քաղաքականությունների վերաբերյալ՝ կապված գործարար միջավայրի և կորպորատիվ կառավարման խնդիրների հետ:

3.3. Մակրոտնտեսական քաղաքականությանը տրամադրվող աջակցություն

Շվեյցարիայի կողմից մակրոտնտեսական քաղաքականությանը աջակցելու նպատակն էր բարելավել Ադրբեջանում ֆինանսական գործընթացների և մակրոտնտեսական քաղաքականությունների թափանցիկությունը, արդյունավետությունը և կայունությունը: Ադրբեջանի Կենտրոնական բանկին ցուցաբերվող երկարատև տեխնիկական օգնության արդյունքում ստեղծվեցին Հետազոտությունների և Ռազմավարական կառավարման բաժինները և խթանվեց Կապիտալ շուկայի զարգացման 2011-2020թթ. պետական ծրագրի մշակումը: Ավելին՝ բարելավվել է վճարումների հաշվեկշիռի վերաբերող վիճակագրությունը, որն այժմ պատրաստ է հրապարակման: Ադրբեջանի Տնտեսական զարգացման և Ֆինանսների նախարարություններում, և Կենտրոնական բանկում ֆինանսական ծրագրավորման գործիքների զարգացումը խթանեց մակրոտնտեսական վերլուծություններ և կանխատեսումներ կատարելու ազգային կարողությունները, որը նպաստեց վերջին տարիների ընթացքում բյուջեի կազմման բարելավմանը: Տնտեսական զարգացման նախարարությունը ֆինանսական ծրագրավորումն արագ ընդունեց որպես բյուջետավորման և միջնաժամկետ ծրագրի հիմք: Արդյունքում 2009 և 2010 թթ. բյուջեն պահպանողական էր, իսկ որոշումներ կայացողներին կարող էր հիմնավոր եռամսյակային մշտադիտարկման տեղեկատվությունը տրամադրվել: Ֆինանսների նախարարությունը նույնպես մշակել է ֆինանսական

ծրագրավորման մոդել, որը նա կանոնավոր կերպով օգտագործում է Նավթային պետական հիմնադրամի վերաբերյալ ֆինանսական կանխատեսումներ անելու համար: Եվ, վերջապես, նախաձեռնվել է խթանել Հաշվիչ պալատի պետական ֆինանսական կառավարման գործընթացները՝ ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտերի բարեփոխումներին ուղղված աջակցության տրամադրման և կարողությունների զարգացման գործողությունների միջոցով:

Փորձը ցույց տվեց, որ այս ոլորտում կարևորագույն մակրոտնտեսական գործիքներին վերաբերվող գիտելիքների փոխանցման և կարևոր կառուցվածքային բարեփոխումների միջոցով իրականացվող գործողությունները նպաստում են երկրի կայուն տնտեսական զարգացմանը: Շվեյցարիան վերոնշյալ իշխանությունների հետ համագործակցության լավ հիմք է ստեղծել և համարվում է այս հարցերով ճանաչված գործընկեր: Հետևաբար այն կշարունակի իր ներգրավվածությունը՝ հիմնվելով ընթացիկ գործողությունների վրա:

3.4. Շվեյցարիայի միջնորդությունը և միջնորդի ծառայությունների տրամադրումը

Տարիներ շարունակ Քաղաքական հարցերի բաժինը օժանդակել է ընդլայնված տարածաշրջանում՝ ներառյալ Հյուսիսային Կովկասը, երկխոսությանը և խաղաղության կառուցմանը խթանող նախաձեռնություններին:

Սկսած 2007թ. Շվեյցարիան ներգրավված է եղել միջնորդական գործունեության մեջ՝ ուղղված Հայաստանի և Թուրքիայի մտերմացման խթանմանը, որի արդյունքում 2009թ. հոկտեմբերին ստորագրվեցին հարաբերությունների նորմալացման վերաբերյալ, այսպես կոչված, ցյուրիխյան արձանագրությունները:

Չնայած, որ Հայաստանի և Թուրքիայի խորհրդարանները դեռ չեն վավերացրել այդ արձանագրությունները, Շվեյցարիան դեռ շարունակում է սատարել Հայաստան-Թուրքիա մտերմացման ջանքերին: Շվեյցարիան ներկայացնում է Վրաստանի շահերը Ռուսաստանի Դաշնությունում և հակառակը, քանի որ այս երկու երկրները խզել են դիվանագիտական հարաբերությունները 2008 թ. պատերազմի պատճառով: 2011թ. Շվեյցարիայի միջնորդության արդյունքում Վրաստանը և Ռուսաստանի Դաշնությունը համաձայնության եկան, որը թույլ տվեց վերջինիս միանալ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (WTO):

Բազմակողմանի համատեքստում ներքին տեղահանված բնակչության մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի նախկին ներկայացուցիչը՝ Ուոլտեր Բյուլինը, իր ներդրումն ունեցավ Վրաստանի 2012-2014թթ. ներքին տեղահանված բնակչության բնակարանային պայմանների վերաբերյալ գործողությունների ծրագրի մշակմանը: Շվեյցարական դիվանագետ Ջայդի Տայլավինին գլխավորում էր Վրաստանում Միավորված ազգերի դիտորդական պատվիրակությունը (UNOMIG-ը) և, լինելով Եվրոպական Միության կողմից պատվիրակված՝ ուսումնասիրեց 2008թ. Վրաստանի և Ռուսաստանի միջև պատերազմի հանգամանքները: Շվեյցարիան նույնպես սատարում է Ժնևյան բանակցություններին և համարում է այն Վրաստանում կայուն խաղաղության ստեղծման քննարկման համար աննախադեպ բազմակողմանի ֆորում:

4. Ապագա ծրագրի համար հետևանքները

Շվեյցարիան կշարունակի աջակցել երեք երկրներին շտկելու անցումային շրջանի բացերը այն ոլորտներում, որտեղ Շվեյցարիան կարող է շոշափելի ներդրում ունենալ՝ տնտեսական և սոցիալական

զարգացման առումով: Տեխնիկական և ֆինանսական երկարատև օգնության, հումանիտար օգնության և խաղաղության կառուցմանն ուղղված միջոցառումների համալիր կիրառումը հանդիսանում է Հարավային Կովկասի տարածաշրջանին տրամադրվող Շվեյցարիայի օգնության արժանիքը: 2013-2016թթ.. Հարավային Կովկասի Շվեյցարիայի Համագործակցության ռազմավարությունը մեծ մասամբ հիմնված է այս առավելության վրա և առանձնացրել է երեք գերակա ոլորտներ, որոնց օժանդակում են տարբեր պետական կառույցներ՝ յուրաքանչյուրն իր հիմնական կարողություններին համապատասխան, դրանով էլ ավելի ամրապնդելով շվեյցարական օգնության կապակցվածությունն ու արդյունավետությունը:

Գյուղական բնակչության բավականին մեծ մասի հուսալի եկամուտ ստանալու հնարավորությունները դեռ սահմանափակ են: Արտադրության ծավալները բարձրացնելու և շուկաների հասանելիությունը ավելացնելու համար փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) և փոքր ու միջին ֆերմերների համար դեռևս պետք են բարեփոխումներ և ներդրումներ: Տնտեսություն վարելու պրակտիկական և կարողությունները լավացնելու և մինչ այժմ ստացած արդյունքները ամրապնդելու և խորացնելու համար անհրաժեշտ է լավացնել մասնագիտական կրթությունը և ֆինանսական ծառայությունների տրամադրումը: Հետևաբար, Շվեյցարիան երեք երկրներում կշարունակի, **Տնտեսական զարգացման և զբաղվածության** ոլորտի շրջանակներում, աջակցել գյուղատնտեսության ոլորտում շուկայի զարգացմանը՝ հաշվի առնելով նաև հակամարտությունների և բնական աղետների արդյունքում տուժված բնակչության կենսական պայմանների բարելավումը և սոցիալ-տնտեսական ինտեգրացումը: Ադրբեջանում տնտեսությունը, ինչպես նաև բնակչության եկամուտների աղբյուրները հետագա դիվերսիֆիկացիայի կարիք ունեն:

Շվեյցարիան գործարար միջավայրի բարելավումը և ֆինանսական հատվածի ամրապնդման ջանքերը կպահի իր ուշադրության կենտրոնում: Ի լրումն դրան, այն աջակցություն կտրամադրի գործարար կարողությունների զարգացման ուղղությամբ:

Որպես նոր գերակա ոլորտ է որոշվել **Կառավարման և պետական ծառայությունների** ոլորտը: Հաշվի առնելով անցումային շրջանի բարեփոխումների ծրագրերը, որոնք վերաբերվում են տեղական իշխանություններին ավելի շատ գործառույթների փոխանցմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը և ավելի արդյունավետ ու հաշվետու պետության կառուցմանը: Հայաստանին և Վրաստանին տրամադրվող Շվեյցարիայի աջակցությունը հիմնականում ուղղված կլինի տեղական իշխանությունների իրենց համայնքների տնտեսական զարգացման և աղետների համապարփակ կառավարման համար անհրաժեշտ պլանավորման, բյուջետավորման և ծառայությունների կառավարման և/կամ տրամադրման կարողությունների զարգացմանը: Այլ դոնորների հետ միասին Շվեյցարիան ուշադիր կդիտարկի այդ երկու երկրներում պետական համակարգի բարեփոխումների և ապակենտրոնացման հետ կապված քաղաքական ենթատեքստը և կտրամադրի իր աջակցությունն այն դեպքերում, երբ դա նպատակահարմար կլինի: Ադրբեջանում բարձրորակ կոմունալ ծառայությունները (հատկապես՝ ջրամատակարարումը) խթանելու նպատակով՝ Շվեյցարիան, ի լրումն ֆիզիկական ենթակառուցվածքների կառուցման համար տրամադրվող ներդրումների, կտրամադրի իր աջակցությունն այդ կոմունալ ծառայությունների ապակենտրոնացման շարունակման և կառավարման կարողությունների բարձրացման համար: Ազգային մակարդակում Շվեյցարիայի աջակցությունն ուղղված կլինի պետական ֆինանսական կառավարման և տնտեսական քաղաքականությունների կառավարման ամրապնդմանը:

Հարավային Կովկասի տարածաշրջանում և հարևան տարածաշրջաններում հակամարտությունները դարձնում են տարածաշրջանը խոցելի և անկայուն: Այդ հակամարտությունները խանգարում են, որ այդ երեք հանրապետությունները լիովին զարգացնեն իրենց սոցիալական, մարդկային և տնտեսական ներուժը և հետագա ապակայունացման վտանգ են կրում: Այս իրավիճակը հասկանալով և հիմնվելով նախորդ փորձի վրա՝ Շվեյցարիան կավելացնի իր ջանքերը հակամարտությունների վերափոխման բնագավառում և կծնավորի **Մարդու անվտանգության և պաշտպանության** ոլորտը, որպես սույն ռազմավարության մաս: Մարդու անվտանգության հայեցակարգն ուղղված է անհատների անվտանգության և իրենց պաշտպանության վրա քաղաքական բռնության, պատերազմի և կամայական բռնության դեպքերի դեմ: Այն հիմնվում է այն գաղափարի վրա, որ խաղաղության քաղաքականությունը, մարդու իրավունքների քաղաքականությունը և մարդասիրական քաղաքականությունը սերտ կապված են միմյանց հետ: Նոր բնագավառի շրջանակներում բարձր մակարդակի դիվանագիտական նախաձեռնությունները կհամալրվեն տեղական մակարդակում իրականացվող և խաղաղության կառուցմանն ուղղված գործողությունների հետ: Կշարունակվի աջակցությունը, որն ուղղված է ընտրված տարածաշրջանների բնակչության կարիքավոր խմբերի հիմնական մարդասիրական կարիքները հոգալուն և պաշտպանությանը, որը կարիքը կարող է էլ ավելի մեծ լինել՝ հակամարտության վերսկսման կամ մեծ բնական աղետի դեպքում:

Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության 2013-2016 թթ. ռազմավարությունը, հետևաբար, հանդիսանում է շարունակական աջակցության համալիր և միմյանց լրացնող համակցություն, որը նախկինում դրական արդյունքներ է ցուցադրել, սակայն, որին պետք է ավելի շատ ժամանակ՝ պետական

և խաղաղության կառուցման նոր նախաձեռնությունների հետ կապված լիովին արդյունք ստանալու համար: Հաշվի առնելով կարիքավոր և հակամարտությունների արդյունքում տուժված բնակչության խմբերի իրավիճակի դանդաղ, սակայն՝ կայուն բարելավումը՝ Շվեյցարիայի մարդասիրական օգնության բաժանմունքը պլանավորում է գալիք տարիների ընթացքում դանդաղ կրճատել իր ֆինանսավորումը և ավարտել իր աշխատանքը 2016թ. վերջին:

5. 2013-2016թթ. համար ռազմավարական կողմնորոշումները և գերակայությունները

5.1. Ընդհանուր նպատակը

Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության երկարաժամկետ զարգացման նպատակը հետևյալն է. Շվեյցարիան ներդրում է կատարում ապահովելու համար Հարավային Կովկասի տարածաշրջանի խաղաղ անցումը դեպի ժողովրդավարություն և ներառական տնտեսական զարգացում:

Ընդհանուր նպատակին հասնելու համար Շվեյցարիայի ներդրումները կիրականացվեն հետևյալ երեք ոլորտներում.

5.2. «Տնտեսական զարգացման և զբաղվածության» ոլորտ

Սույն ոլորտի նպատակը ձևակերպվել է հետևյալ կերպ. Հարավային Կովկասում կայուն տնտեսական զարգացում և սոցիալական համերաշխություն՝ ներառական աճի միջոցով:

Խորհրդային Միության փլուզումից հետո նախկինում պետական ձեռնարկություններում աշխատող բնակչության գերակա մասը կորցրեց իր աշխատանքը և ստիպված էր բնամեթերային գյուղատնտեսություն վարել: Գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումները երեք հանրապետություններում էլ դեռևս հետ են

մնում: Այնուամենայնիվ գյուղատնտեսությունն ունի մեծ ներուժ, որը նույնպես արտահայտվում է այն փաստով, որ երեք կառավարություններն էլ իրենց ծրագրերում մեծ ուշադրություն են դարձնում ոլորտի արդիականացմանը: Շվեյցարական ծրագիրը կհիմնվի այս հիմքի վրա:

Շվեյցարիայի նպատակն է ավելացնել գյուղական/գյուղատնտեսական ՓՄՁ-ների, փոքր տնտեսվարող ֆերմերների և հակամարտությունների և բնական աղետների արդյունքում տուժված բնակչության տնտեսական և սոցիալական գույքը՝ լավացնելով նրանց տեխնիկական և գործարար կարողությունները և խթանելով նրանց շուկաներում արդյունավետ ինտեգրումը: Շվեյցարիան կշարունակի աջակցել ֆերմերների և նյութեր և պարագաներ/ծառայություններ մատուցողների, ինչպես նաև ընտրված գյուղատնտեսական արժեքային շղթայի ներքո շուկայի այլ դերակատարների միջև կայուն գործարար գործընկերության ստեղծմանը: Շվեյցարիայի կողմից աջակցության ծրագրերը կշարունակեն շուկայի զարգացման մոտեցում հետապնդել, որպեսզի վերանան անասնապահության և պտղարտադրության ոլորտների համակարգային խոչընդոտները՝ միշտ ուղղված լինելով տղամարդկանց և կանանց եկամուտների ավելացմանը: Գործընկեր կազմակերպությունների և առևտրային բանկերի հետ ռազմավարական դաշինքների միջոցով կխթանվեն գյուղական ֆինանսական գործիքները, որպեսզի հեշտացվի ագրոբիզնեսի համար մատչելի վարկերի հասանելիությունը և, հետևաբար, բարձրացվի ոլորտի ընդհանուր արտադրողականությունը: Շվեյցարիան նույնպես կսկսի աջակցություն ցուցաբերել ֆերմերների մասնագիտական կարողությունների ամրապնդմանն ուղղված հնարավորությունների զարգացմանը՝ գյուղատնտեսական ուսումնական կենտրոնների համակարգային հզորացման միջոցով: Ի վերջո՝ Շվեյցարիան իր

ներդրումը կկատարի տարածաշրջանի սննդով ապահովմանը:

Տեղում Շվեյցարիայի օգնությունը կգուճակվի Շվեյցարական համագործակցության գրասենյակի կողմից տարվող նպատակաուղղված քաղաքական երկխոսության հետ, որի նպատակը կլինի խթանել ներառական պետական քաղաքականությունները՝ ծրագրերը՝ կապված տարածաշրջանային զարգացման և գյուղատնտեսության հետ: Ադրբեջանում գյուղական տնտեսական զարգացման ծրագրերը աստիճանաբար կփոխարինվեն տեխնիկական գործընկերությամբ, որը կարող է լինել շվեյցարական և ադրբեջանական հաստատությունների միջև եղբայրացման ծրագրերի ձևով, որի նպատակը կլինի խթանել գյուղատնտեսության բնագավառում գիտելիքների փոխանցումը:

Վրաստանում հակամարտությունների և բնական աղետների հետևանքով տուժված բնակչության սոցիալ-տնտեսական ինտեգրացումն ամրապնդելու և ապրուստի պայմաններն ավելի բարելավելու համար Շվեյցարիան կշարունակի սատարել համայնքի մոբիլիզացման նախաձեռնությունների միջոցով հատուկ նախագծված բնակարանների ապահովման և փոքր ծավալի համայնքային ենթակառուցվածքների վերանորոգման (օրինակ՝ մանկապարտեզներ, դպրոցներ) տարաբնույթ ծրագրերի իրականացմանը: Այն կենսապայմանների բարելավմանն ուղղված գործողություններ կիրականացնի՝ ինքնապահովման դրամաշնորհների և ՓՄՁ-ների համար շնորհների տրամադրման միջոցով խթանելով թիրախային բնակչության համար նոր եկամուտների վաստակելու հնարավորությունները:

Ադրբեջանում Շվեյցարիան կշարունակի զարգացնել ՓՄՁ-ների ձեռնարկատիրական և գործարար կարողությունները, դրանով իսկ հզորացնելով նրանց կառավարման և ֆինանսական գործունեությունը: Կբարելավվեն մասնավոր և ֆինանսական

հատվածների գործունեության պայմանները, որը կօգնի երկրին դիվերսիֆիկացնել իր տնտեսությունը և խթանել ոչ նավթային մասնավոր հատվածի զարգացումը: Շեշտը կդրվի գործարար միջավայրի հետագա բարելավման և ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացման վրա: Հատուկ ուշադրություն կդարձվի նոր բիզնես սկսելու և ՓՄՁ-ների գործունեության համար օրենսդրական խոչնդոտների վերացման վրա, ինչպիսիք են՝ թույլտվությունները, ստուգումները և հարկային բարեփոխումները: Նման օգնություն կարող է տրամադրվել գյուղատնտեսության ոլորտին, որն ուղղված կլինի գյուղատնտեսական բիզնեսների լիցենզավորման և թույլտվությունների հետ կապված օրենսդրական բարեփոխումների վրա՝ դրանով իսկ նպաստելով գյուղական տնտեսական զարգացմանը: Շվեյցարիան նաև կաշխատի ադրբեջանական ՁԼՄ-ների հետ, որպեսզի բարձրացնի նրանց տնտեսական և ֆինանսական գրագիտությունը, որպեսզի իրենք իվիճակի լինեն գրել և խթանել երկրում տնտեսական ազատությունները: Ֆինանսական աղբյուրների հասանելիությունը հեշտացնելու և ֆինանսական ոլորտի ընդհանուր կայունությանը նպաստելու համար, այս բնագավառում, Շվեյցարիան իր ջանքերը կուղղի օրենսդրական դաշտի բարեփոխումների և շուկայական ենթակառուցվածքների արդիականացման, ֆինանսական հաստատությունների վարկավորման և ռիսկերի կառավարման պրակտիկայի ամրապնդման, և տնային տնտեսությունների և ՓՄՁ-ների համար հասանելի ֆինանսական պրոդուկտների ավելացման վրա: Հատուկ նախանշված աջակցությունը Կշարունակվի կորպորատիվ կառավարման բնագավառում: Բացի դրանից, բոլոր երեք երկրների համար հասանելի է մասնավոր հատվածի զարգացման և ենթակառուցվածքների ֆինանսավորման բնագավառներում գլոբալ և տարածաշրջանային նախաձեռնությունների միջոցով ՏՀՊԲ-ի կողմից առաջարկվող տեխնիկական

օգնությունը (օրինակ՝ ենթակառուցվածքների հետ կապված խորհրդատվական ծրագիր) և ֆինանսական բնագավառի բարեփոխումները (օրինակ՝ ֆինանսական բարեփոխումների և հզորացման նախաձեռնություն) (FIRST):

5.3 «Կառավարման և հանրային ծառայությունների» ոլորտը

Այս ոլորտի նպատակն է՝ Հարավային Կովկասում ժողովրդավարական գործընթացների ամրապնդումը, հաշվետվողականությունը և ընտրված պետական ծառայությունների որակի բարելավումը:

Հայաստանն ու Վրաստանը, իրենց բարեփոխումների գործընթացների շրջանակներում, պատրաստակամություն են ցուցաբերում կառավարության ցածր մակարդակներին փոխանցել ավելի մեծ լիազորություններ: Շվեյցարիան պլանավորում է սատարել այն նախաձեռնությունները, որոնք իրականացվելու են գյուղական տնտեսական զարգացման հետ խիստ կապ ունեցող ընտրված ոլորտներում: Հիմնվելով նախորդ 2008-2012թթ.. Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության ռազմավարության շրջանակներում նախաձեռնված գործողությունների վրա և, հաշվի առնելով այն փաստը, որ ի լրումն առաջին ոլորտի շրջանակներում իրականացվող արժեքային շղթաների աջակցության ծրագրերի, Շվեյցարիան կաջակցի տեղական իշխանություններին աղետների կայուն կառավարման, տարածքային կառավարման, ենթակառուցվածքների կառավարման, արոտների կառավարման հետ կապված իրենց գործառնությունների իրականացման բարելավման և օրենսդրական ու կարգավորիչ հարցերի (օրինակ՝ սննդի անվտանգությունը) շուրջ ֆերմերներին տեղեկատվության փոխանցման խնդիրներում: Նույնիսկ ներկայիս օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակներում համայնքային մակարդակում տրամադրվող

ծառայությունների արդյունավետությունը կարող է բարելավվել, որը կնպաստի սոցիալական և տնտեսական զարգացմանը: Այն տարածաշրջանների համայնքները, որտեղ Շվեյցարիան արդեն աշխատում է, կխրախուսվեն ամրապնդելու միմիանց հետ համագործակցությունը և միասին իրենց կարիքների մասին տեղեկացնելու տարածաշրջանային և ազգային իշխանություններին:

Կառավարման ոլորտում աշխատող այլ դոմոր կազմակերպությունների հետ համագործակցելով՝ Շվեյցարիան կշարունակի խթանել այնպիսի քաղաքական խնդիրների իրականացմանը, ինչպիսիք են՝ ապակենտրոնացումը, զարգացման ուղղված պետական-մասնավոր համագործակցությունը և բոլոր պետական մակարդակներում աղետների համալիր կառավարման ներառումն ու իրականացումը: Հետևաբար, կարևոր կլինի գտնել կենտրոնական կառավարության համար այն խթանները, որոնք կնպաստեն կառավարության ավելի ցածր մակարդակներին պատասխանատվության և գործառույթների փոխանցմանը:

Ադրբեջանում Շվեյցարիան կշարունակի աջակցություն տրամադրել ջրի պետական ծառայությունների ապակենտրոնացմանը և կօգնի նրանց բարելավել իրենց ֆինանսական և գործնական աշխատանքը: Բացի դրանից, Շվեյցարիան կշարունակի իր օգնությունը կոմունալ ծառայությունների ֆիզիկական ենթակառուցվածքների կառուցման և նորոգման աշխատանքներին, որպեսզի ապահովվեն բարձրորակ ծառայություններ և տարածաշրջաններում ստեղծվեն տնտեսական հնարավորությունների ավելացման համար նյութական հրիմքեր:

Ազգային մակարդակում Ադրբեջանում հատուկ ուշադրության կենտրոնում կլինեն պետական ֆինանսական կառավարման և տնտեսական քաղաքականությունների ոլորտներում կառավարման խնդիրները, որոնք համարվում են կայուն տնտեսական զարգացումը խթանելու համար անհրաժեշտ նախապայմաններ: Պետության հաշվետվողականությունն ու

թափանցիկությունը, լինելով մասնավոր հատվածի գործունեության համար օրենսդրական պայմանների մի մասը, նույնպես կարող են արժեք հանդիսանալ արտաքին ուղղակի ներդրումներ գրավելու համար: Շվեյցարիան կաջակցի բարելավել պետական հատվածի կարողությունները, իրականացնել հուսալի տնտեսական քաղաքականություն և թափանցիկ ու հաշվետու կերպով կառավարել պետական միջոցները: Այս նպատակին հասնելու համար Շվեյցարիան կշարունակի զարգացնել մակրոտնտեսական քաղաքականության համար պատասխանատու հիմնական նախարարությունների կարողությունները և հզորացնել պետական հատվածի հաշվետվողականությունը: Շվեյցարիան նույնպես մտադրություն ունի նպաստել և խթանել պետական ֆինանսական կառավարման կամ, ընդհանրապես, պետական կառավարման բնագավառների բարեփոխումների իրականացմանը: Բացի այդ, երեք հանրապետությունները կարող են օժանդակություն ստանալ գլոբալ և տարածաշրջանային նախաձեռնությունների շրջանակներում պետական ֆինանսական կառավարման (օրինակ՝ Պետական ծախսերի կառավարման գործընկերների աջակցության գիտելիքների փոխանակման ցանց PEM PAL), հարկային, բնական ռեսուրսների կառավարման (օրինակ՝ EITI) և պետական պարտքի կառավարման բնագավառներում:

Ժողովրդավարության, օրենքի իշխանության և մարդու իրավունքների բնագավառներում Քաղաքական հարցերով տնօրինության Մարդու անվտանգության բաժինը (ՄԱԲ) կնախաձեռնի և կօժանդակի այն գործողությունները, որոնք կավելացնեն քաղաքական ներառական մասնակցությունը, կհզորացնեն համապատասխան պետական հաստատությունների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և կապահովեն մարդու իրավունքների միջազգային չափանիշների հարգանքը: Շվեյցարիայի կողմից

տրամադրվող օգնությունն ուղղված կլինի նաև ընտրությունների կազմակերպմանը, գենդերային հավասարությանը, խոսքի ազատությանը և հավաքների կազմակերպման ազատությանը, փոքրամասնությունների պաշտպանությանը և մարդու իրավունքների պաշտպանների աջակցությանը: Նախատեսվում է համագործակցությունը պետական կառույցների, մարդու իրավունքների պաշտպանների հետ և գործընկերությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, որի հետ կապված լրացուցիչ օժանդակություն կցուցաբերվի գիտելիքների ամրապնդման տեսանկյունից՝ տեղական ենթատեքստում, և գործողություններ կիրականացվեն միջազգային մակարդակում: Երեք երկրների երիտասարդ դիվանագետներին և խոստումնալից երիտասարդ լիդերներին հնարավորություն կընձեռվի ամրապնդել իրենց գիտելիքները և կարողությունները միջազգային հարաբերությունների, մարդու իրավունքների և խաղաղության կառուցման ոլորտներում: Այս ոլորտի ծրագիրն օգուտներ կքաղի ԵԱՀԿ-ում 2014թ. Շվեյցարիայի նախագահությունից՝ ջանքերը միավորելու և փորձը կիսելու նպատակով:

5.4. «Մարդու անվտանգության և պաշտպանության» ոլորտ

Սույն ոլորտի նպատակը հետևյալն է՝ Հարավային Կովկասի բնակչության անվտանգության և պաշտպանության ամրապնդումը, հատկապես, հակամարտությունների հետևանքով տուժված կարիքավորների մոտ:

Շվեյցարիան կշարունակի տրամադրել իր բարի դրացիական ջանքերը Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի համապատասխան շահագրգիռ կողմերին և խթանել հակամարտության վերափոխմանը: Ընտրված բարձրաստիճան միջնորդական նախաձեռնությունները և հակամարտությունների քաղաքական լուծմանն ուղղված քաղաքական

երկխոսությունը կլրացվեն նոր, տեղական մակարդակում խաղաղության կառուցմանն ուղղված գործողությունների և տարանջատված հասարակությունների միջև երկխոսության վերակառուցման օժանդակությամբ:

ՄԱԲ-ը կտրամադրի իր փորձառությունը միջնորդության, օժանդակության, քաղաքական երկխոսության և անցյալի խնդիրներով զբաղվելու ոլորտներում: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի Կանանց, խաղաղությանը և անվտանգությանը վերաբերող 1325 բանաձևի ազգային պլանի՝ Շվեյցարիան նպատակ է դրել բարձրացնել կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում, որը կապված է խաղաղության կառուցման հետ, որպեսզի կանխվեն գենդերային հողի վրա կատարվող բռնությունները և պաշտպանվեն աղջիկների և կանանց կարիքներն ու իրավունքները հակամարտությունների ժամանակ և դրանցից հետո, իսկ գենդերային խնդիրներն ինտեգրվեն խաղաղության կառուցման հետ կապված բոլոր ծրագրերում և նախագծերում: Բացի այդ Շվեյցարիան Հյուսիսային Կովկասի տարածաշրջանում վարում է մարդասիրական երկխոսություն և կորոնի հնարավոր նմանություններ ավելի լայն կովկասյան համատեքստում:

Շվեյցարիան կշարունակի արձագանքել հակամարտությունների արդյունքում տուժված կարիքավոր մարդկանց, և հատկապես, ընտրված տարածաշրջաններում (օրինակ՝ անկախացած Աբխազիայի տարածաշրջանում, Շիդա Քարտլիում) ներքին տեղահանվածների տարրական մարդասիրական կարիքներին՝ իրականացնելով բնակարանային ապահովման տարբեր ծրագրեր և ստեղծելով ավելի բարենպաստ ապրուստի պայմաններ: Նա նպատակ ունի նաև ուժեղացնել Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում հակամարտությունների

արդյունքում տուժված բնակչության պաշտպանվածությունը՝ ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակին և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի տարեկան ծրագրերի համար հատկացվող ֆինանսական դրամաշնորհների միջոցով: Եվ վերջապես Շվեյցարիան Վրաստանի տարբեր կառավարական մակարդակներում կիրականացնի քաղաքական երկխոսություն, որն ուղղված է ներքին տեղահանված բնակչության և բնական աղետների արդյունքում տուժված մարդկանց, զոհերի իրավունքները պաշտպանելուն:

5.5. Ոչ հիմնական ծրագրեր

Տարիներ շարունակ Շվեյցարիան աջակցություն է ցուցաբերել Հարավային

Կովկասում և Արևելյան Եվրոպայի երկրներում մարդկանց վաճառքը՝ թրաֆիքինգը, կանխելու համար: Քանի որ աշխատանքային միգրացիան դեպի հարևան երկրներ մեծ խնդիր է հանդիսանում Հարավային Կովկասում, ջանքերը կարելի է ուղղել գյուղական շրջաններից մեկնող աշխատանքային միգրանտներին: Այս դեպքում կարելի է կապ ստեղծել գյուղական տնտեսական զարգացման ծրագրերի հետ: Տարածաշրջանային ծրագրի շրջանակներում Շվեյցարիան ուղիներ կորոնի աջակցելու արվեստին և մշակույթին՝ որպես հասարակության ներառական և ակնառու հիմնասյուներ:

2013-2016թթ.. Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության ռազմավարությունը հակիրճ

Ընդհանուր նպատակը Շվեյցարիան նպաստում է Հարավային Կովկասում ժողովրդավարության և նարառական տնտեսական զարգացման խաղաղ հաստատմանը

Ոլորտի անվանումը	Տնտեսական զարգացում և զբաղվածություն	Կառավարում և պետական ծառայություններ	Մարդու անվտանգություն և պաշտպանություն
Ոլորտի նպատակը	Նպաստել Հարավային Կովկասում տնտեսական զարգացմանը և սոցիալական համերաշխությանը՝ խթանելով ներառական աճը	Ժողովրդավարական գործընթացները և հաշվետվողականությունը Հարավային Կովկասում ամրապնդվել են և ընտրված պետական ծառայությունների որակը բարելավվել է	Հարավային Կովկասի բնակչության՝ ներառյալ հակամարտությունների և բնական աղետների արդյունքում տուժված կարիքավոր բնակչության մարդու անվտանգությունը ամրապնդվել է
Մտտեցումը	Ազգային մակարդակում իրականացում	Ազգային մակարդակում իրականացում	Տարածաշրջանային և ազգային մակարդակում իրականացում
Գործողությունների հիմնական բնագավառները	Շուկայի զարգացում (գյուղատնտեսական արժեչոթաներ); կարողությունների զարգացում գյուղատնտեսության ոլորտում; գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական դաշտ	Տեղական իշխանությունների կարողությունները՝ կապված տնտեսական զարգացման և աղետների ռիսկերի նվազեցման հետ; Պետական ջրամատակարարման ծառայության ապակենտրոնացում; Ֆիզիկական կոմունալ ծառայությունների ենթակառուցվածքներ	Բնակարանների ապահովման ծրագիր և պաշտպանվածություն; ՇՁՀԳ-ի Մարդասիրական օգնությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում
Շվեյցարիայի կառավարական մարմինները և թիրախային երկրները	ՇՁՀԳ-ի Տեխնիկական համագործակցությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, ՏՀԳԲ-ն՝ Ադրբեջանում	ՇՁՀԳ-ի Տեխնիկական համագործակցությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում; ՇՁՀԳ-ի Մարդասիրական օգնությունը Հայաստանում, ՏՀԳԲ-ն Ադրբեջանում	Խաղաղության կառուցում և երկխոսություն; ՄԱԲ-ը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում
	Անմիջական կենսապահովման օգնություն և բնակարանների ապահովման կայուն ծրագիր հակամարտությունների արդյունքում տուժված և բնակչության կարիքավոր խմբերի համար;	Պետական ֆինանսական կառավարում; Մակրոտնտեսական աջակցություն; ՏՀԳԲ-ն՝ Ադրբեջանում; Մարդու իրավունքների խթանում; Աջակցություն ընտրու-	Հակամարտությունների ընթացքում միջնորդություն և փոխվստահության կառուցում; ՔՀԲ-ն Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում

Տարանցիկ
թեմաներ

ՇՁՀԳ-ի Մարդասիրական օգնությունը Վրաստանում; Մասնավոր և ֆինանանսական հատվածի օրենսդրական պայմանները; Ֆինանսական աղբյուրների հասանելիությունը; Ֆինանսական հատվածի բարեփոխումները; ՏՀՊԲ-ն՝ Ադրբեջանում	թյունների գործընթացներում; ՄԱԲ-ը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում	
Կառավարում	Գեոդերային հավասարություն	Աղետների ռիսկերի նվազեցում

6. Ծրագրի իրականացումը և կառավարումը

6.1. Շվեյցարական հաստատությունների միջև համագործակցության սկզբունքները

2013-2016թթ. Շվեյցարական համագործակցության ծրագիրը Հարավային Կովկասում հիմքեր է ստեղծում ծրագրում ներգրավված շվեյցարական կառավարական մարմինների միջև համագործակցության և փոխազդեցության համար: Նրանք բոլորը իրենց ներդրումն են կատարում ընդհանուր տարածաշրջանային զարգացման նպատակին հասնելու համար՝ իրենց մանդատին և հիմնական կարողություններին համապատասխան: Բոլոր հաստատություններն ակտիվորեն խթանում են միմյանց միջև փոխազդեցությունն ու փոխլրացումը, ՇՀԳ-ի առաջնորդությամբ կանոնավոր կերպով հանդիպում են, որպեսզի գրանցեն տեղի ունեցած առաջընթացը և քննարկեն ռազմավարական կարևորություն ունեցող ծրագրային խնդիրները:

Շվեյցարիան կշարունակի համարել Հարավային Կովկասը որպես մեկ տարածաշրջան, որի երեք երկրները կիսում են ժամանակակից պատմությունը, ունեն անցումային շրջանին բնորոշ նույն խնդիրները և կախված են իրենց միջև բաժանման գիծ գծած տարածքային հակամարտությունների խաղաղ վերափոխումից: Շվեյցարական ծրագրի տարածաշրջանային գաղափարախոսությունն արտահայտվում է, հիմնականում, երեք ընդհանուր ոլորտների մեջ՝ մոտեցումների նույնության, թեմատիկ փորձառության և երկրների միջև փորձի փոխանակման համար ցանցերի մեջ: Սակայն տարբեր ծրագրերի իրականացումը պետք է հարմարեցվի ազգային ենթատեքստին:

Մարդասիրական կարիքների և վստահության կառուցման միջոցառումների իրականացման պատճառով կարևոր է համարվում

Շվեյցարիայի ներկայությունը Արևմտահայում:

6.2. Օգնության ձևաչափերը և գործընկերները

Շվեյցարական ծրագիրը կիրականացվի օգնության և զարգացման արդյունավետության չափանիշների համաձայն: Ոլորտների շրջանակներում իրականացվող ծրագրերը կամրապնդվեն հիմնական կառավարական գործընկերների հետ՝ վստահելի քաղաքական երկխոսությամբ: Փոխադարձ պարտականությունները և պլանավորված զարգացման նպատակներին հասնելու նվիրվածությունը նշված կլինեն պատասխանատու ճյուղային նախարարությունների կամ ազգային այլ գերատեսչությունների հետ ծրագրերի համաձայնագրերում: Շվեյցարիան կշարունակի աշխատել տարբեր գործընկերների հետ, որոնցից շատերի հետ այն զարգացրել է երկարատև և վստահելի հարաբերություններ: Այդ գործընկերներն են իշխանությունները՝ պետական բոլոր մակարդակներում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, մասնավոր հատվածը, ՄԱԿ-ի կառույցները և միջազգային ֆինանսական հաստատությունները:

ՇՀՀԳ-ի և ՏՀՊԶ-ի պաշտոնական օգնությունը տրամադրվում է միջազգային և տեղական ոչ կառավարական կազմակերպություններին (ՀԿ) տրվող մանդատների, բազմակողմանի միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա դոնորներին հատուկ նպատակառուղիված դրամաշնորհների, ուղղակի գործողությունների, տեխնիկական փորձագետների և տարածաշրջանային և գլոբալ նախաձեռնությունների միջոցով: Կիրախուսվի նաև զարգացմանն ուղղված պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը:

ՇՀՀԳ-ն և ՍՀՊԶ-ն նախատեսում են ֆինանսավորել ավելի երկարատև և մեծ

ծրագրեր, որոնցում համապատասխան երկրների կառավարությունները կխրախուսվեն ներդրումներ կատարել իրենց սեփական միջոցներից: Դրական պայմանների դեպքում՝ հաջողված փորձը կընդլայնվի, որպեսզի ազդեցություն ունենա թիրախային տարածաշրջաններից դուրս: Շվեյցարիան համապատասխան երկրների կառավարությունների հետ իրականացնում է համապարփակ և նպատակաուղղված քաղաքական երկխոսություն և ակտիվորեն որոնում է ռազմավարական գործընկերություններ այլ դոմոր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ (որոնց զաղափարախոսությունը համապատասխանում է շվեյցարական զաղափարախոսությանը), որպեսզի բարձրացվի ծրագրերի իրականացման արդյունավետությունը և զարգանա համազդեցությունը:

6.3. Տարանցիկ թեմաներ

Շվեյցարիան կշարունակի ընդգրկել ծրագրում գենդերային և կառավարման հարցերը՝ որպես տարանցիկ թեմաներ: Հատուկ ուշադրություն կդարձվի կանանց վրա, հատկապես գյուղական վայրերում, որպեսզի իրենք օգտվեն աճի արդյունքներից և կարողանան օգտագործել ստացված տնտեսական հնարավորությունները և ամրապնդել հասարակության մեջ իրենց տեղը: Հաճախ գենդերային և կառավարման խնդիրները սերտորեն փոխկապակցված են և կարող են համատեղ ուշադրության արժանանալ, օրինակ՝ կապված կանանց քաղաքական մասնակցության և ներկայացվածության հետ: Կխրախուսվի կանանց մասնակցությունը երկխոսության պլատֆորմներում, որոնք կապված են հակամարտությունների վերափոխման հետ:

Կառավարման և պետական ծառայությունների ոլորտի ծրագիրը կնպաստի ընտրված ծառայությունների մատուցման հետ կապված կառավարության տարբեր մակարդակներում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:

Տնտեսական զարգացման և զբաղվածության ոլորտում հատուկ ուշադրություն կդարձվի ընտրված արժեքային շղթաներում գործարար հարաբերություններում արդյունավետության և թափանցիկության ամրապնդման վրա (օրինակ՝ ապրանքների գնացուցակ, պայմանագրային հիմունքներով տնտեսվարություն, հստակ օրենքներ և կանոնակարգեր):

Քանի որ նախկինից առկա է գյուղական տնտեսական զարգացման օժանդակության շրջանակներում աղետների ռիսկերի նվազեցման խնդիրների ընդգրկման դրական փորձը, ապա այս թեման կընդգրկվի այն ծրագրերում, որոնց համար այն կարևոր է, որը խիստ կարևոր է կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերին լուծում տալու համար:

6.4. Կոնֆլիկտների մասին իրազեկ ծրագրի կառավարում

Հաշվի առնելով տարածաշրջանի ձգձգված հակամարտությունները և լարվածությունները՝ այն դեպքերում, երբ դա հնարավոր կլինի, կոնտեքստի վերլուծության և ծրագրավորման համար կկիրառվեն կոնֆլիկտների մասին իրազեկ ծրագրի կառավարման հիմնական ասպեկտները: Դա հատկապես ներ է առնում ծրագրի գործընկերների և թիրախային աշխարհագրական տարածաշրջանների զգույշ ընտրությունը, գույքի ճշտման թափանցիկ և անաչառ գործընթացները, որոնք կապված են բնակարանների վերանորոգման և տարբեր ազգային խմբերին պատկանող կարիքավոր և հակամարտությունների արդյունքում տուժված բնակչության խմբերի ընտրության հետ, ինչը հիմնված է իրենց կարիքների վրա: Շվեյցարական կառավարական հաստատությունների միջև «վնաս չտալու» մոտեցումը կօգնի իրաի հետ համատեղ և համահունչ իրականացնել գործողությունները, ինչը կկանխի, որ նրանք բացասական ազդեցություն ունենան միմյանց վրա:

Շվեյցարիան իր մարդասիրական օգնության գործողությունների

պլանավորման և իրականացման
ժամանակ հարգում է մարդասիրական
սկզբունքները:

6.5. Ֆինանսական միջոցները

Հարավային Կովկասում զարգացմանն
ուղղված շվեյցարական պաշտոնական
օգնությունը 2013թ. մինչև 2016թ. ընկած
ժամանակահատվածում կկազմի մոտ 111
միլիոն շվեյցարական ֆրանկ:

Շվեյցարական կառավարական
յուրաքանչյուր հաստատություն
պատասխանատու է ծրագրի իր մասի
իրականացման և ֆինանսավորման
համար:

Ֆինանսական միջոցների մեծ մասը
կհատկացվի Վրաստանին, քանի որ այն
Հարավային Կովկասի տարածաշրջանի
ամենաաղքատ երկիրն է, ունի մեծ
մարդասիրական կարիքներ, իսկ
բնակչությունն ավելի շատ է, քան
Հայաստանի բնակչությունը: Ջբաղեցնելով
միջին եկամուտներ ունեցող երկրների
շարքում ավելի բարձր դիրքեր՝
Ադրբեջանը գրեթե կախված չէ
պաշտոնական զարգացմանն ուղղված
օգնությունից: Չնայած այն բանին, որ
Ադրբեջանը, զուտ թվերով, կստանա գրեթե
նույն միջոցները, ինչը որ՝ Հայաստանը,
սակայն հարաբերական իմաստով նրան
տրամադրվող օգնությունը կլինի ավելի
քիչ, եթե հաշվի առնենք, որ նրա
բնակչությունը զգալիորեն ավելի մեծ է:

Այս ռազմավարության ներքո երեք
երկրները նույնպես օգտվում են
Շվեյցարիայի կողմից ֆինանսավորվող
տարածաշրջանային և գլոբալ
նախաձեռնություններից: Այն դեպքերում,
երբ այս գործողությունները չեն կարող
վերագրվել առանձին երկրին, նրանք չեն
ներկայացվում ստորև ներկայացվող
ֆինանսական կանխատեսումներում:

Ֆինանսական հատկացումները ըստ
երկրի.

Տարածաշրջանային ծրագիր և ՇՀԳ-ի
կառավարման ծախսեր՝ 12 միլիոն
շվեյցարական ֆրանկ

Հայաստան՝ 29 միլիոն շվեյցարական
ֆրանկ

Վրաստան՝ 41 միլիոն շվեյցարական
ֆրանկ

Ադրբեջան՝ 29 միլիոն շվեյցարական
ֆրանկ

Ֆինանսական հատկացումներ՝ ըստ
ուրուտի.

Տնտեսական զարգացում և
զբաղվածություն՝ 51 միլիոն շվեյցարական
ֆրանկ

Կառավարում և պետական
ծառայություններ՝ 34 միլիոն
շվեյցարական ֆրանկ

Մարդու անվտանգություն և
պաշտպանություն՝ 13 միլիոն
շվեյցարական ֆրանկ

Ոչ հիմնական ծրագրեր և ՇՀԳ-ի
կառավարման ծախսեր՝ 12 միլիոն
շվեյցարական ֆրանկ

7. Կառավարում և մշտադիտարկում

Շվեյցարական ծրագրի կառավարումը
կիրականացվի Թբիլիսիում գտնվող
Շվեյցարական համագործակցության
գրասենյակի և Երևանում ու Բաքվում
գտնվող իր երկու մասնաճյուղերի կողմից,
որոնցից յուրաքանչյուրը վերահսկում է
համապատասխան ազգային ծրագիրը:
Հաշվի առնելով գալիք տարիների
ընթացքում որոշված ֆինանսական
միջոցների ավելացումը՝ աշխատակազմը
կհամալրվի երեք օտարերկրյա
հաստիքներով: Լրացուցիչ մարդկային
ռեսուրսները հասանելի են մի քանի
թեմատիկ ցանցերի և շվեյցարական
ադմինիստրացիայում առկա
փորձագիտական ներուժի միջոցով:

Ստատուս քվոի շարունակությունը՝ ըստ
հիմնական միջազգային քաղաքական
վերլուծական կազմակերպությունների և
գործակալությունների, ամենահնարավոր

ապագա սցենարն է Հարավային Կովկասի վրա ազդեցություն ունեցող հակամարտությունների համար: Այդ պատճառով 2013-2016թթ.. Հարավային Կովկասի համար շվեյցարական համագործակցության ռազմավարությունը չի նախատեսում հատուկ այլընտրանքային սցենարներ հակամարտությունների վերսկսման դեպքում, սակայն այն հաշվի է առնում տարածաշրջանային հակամարտությունների հետ կապված ցանկացած զարգացումներ: Եթե այժմ փակ տարածաշրջանները բացվեն, հատկապես, եթե հեշտանա մուտքը Հարավային Օսեթիայի/Ցխինվալիի տարածաշրջան, ապա կգնահատվեն նոր աջակցության հեռանկարները: Շվեյցարական ծրագիրն իր Մարդասիրական օգնության անձնակազմի և տեղում գործող մարդասիրական գործընկեր կազմակերպությունների հետ մեկտեղ պատրաստ է ավելացնել առաջնային օգնության գործողությունները՝ հակամարտության վերսկսման կամ մեծ բնական աղետի դեպքում:

Նախորդ շվեյցարական ծրագրի դրական արդյունքները ցույց են տալիս, որ թիրախային բնակչության տնտեսական և սոցիալական վիճակի բարելավումը, շուկայի զարգացման աջակցության միջոցով, հնարավոր է նույնիսկ ուժգին տնտեսական ճգնաժամի ժամանակ: Ուշացած կամ ուժը կորցրած բարեփոխումների հետ կապված քաղաքական ռիսկերը, անարդար ընտրական գործընթացները և կոռուպցիան մնում են խիստ ուշադրության կենտրոնում: Սակայն դրանք չեն կարող դառնալ պատճառ, որ Շվեյցարիան չցանկանա ներգրավվել Հարավային Կովկասի տարածաշրջանում, հենց այն պատճառով, որ դոնոր երկրները կոչված են աջակցելու դեպի ժողովրդավարություն երկրների անցմանը:

Իր գործընկերների հետ սերտ համագործակցելով՝ ՇՀԳ-ը կապահովի

շվեյցարական ծրագրի լիարժեք մշտադիտարկում՝ ապահովելու ծրագրի արդյունավետ իրականացումը: Շվեյցարիան պարտավորված է ստացված արդյունքների մասին հաշվետու մնալ թե՛ իր երկրում, թե՛ իր գործընկեր երկրներում: Մշտադիտարկումը հիմնված կլինի երեք ոլորտների նախատեսված արդյունքների վրա և կներառի շարունակական մշտադիտարկման ցիկլ՝ արդյունքների վրա հիմնված հաշվետվություններով, որը կապված է երկրների անցումային շրջանի առաջընթացի հետ: Շվեյցարիան կշարունակի հզորացնել իր և իր գործընկերների կարողությունները, որոնք կապված են արդյունքների վրա հիմնված կառավարման հետ, և փորձի փոխանակման և թեմատիկ ցանցերի միջոցով կիսթանի լավ փորձի հետ կապված քննարկումները:

Հավելված I Ակնկալվող արդյունքները

Ընդհանուր նպատակը		
Շվեյցարիան նպաստում է Հարավային Կովկասի տարածաշրջանի խաղաղ անցմանը դեպի ժողովրդավարություն և ներառական տնտեսական զարգացում		
Ոլորտների նպատակները		
<p>Տնտեսական զարգացում և զբաղվածություն Հարավային Կովկասում հզոր տնտեսական զարգացում և սոցիալական բարելավում՝ ներառական աճի միջոցով</p>	<p>Կառավարում և պետական ծառայություններ Հարավային Կովկասում ամուր ժողովրդավարական գործընթացներ և հաշվետվողականություն և ընտրված պետական ծառայությունների որակի բարձրացում</p>	<p>Մարդու անվտանգություն և պաշտպանություն Հարավային Կովկասի բնակչության մարդու անվտանգության և պաշտպանության ուժեղացում, հատկապես հականարտությունների արդյունքում տուժված կարիքավոր մարդկանց համար</p>
Շվեյցարիայի ոլորտների նպատակները		
<p>1. ՓՄՁ-ները, փոքր ֆերմերները և կարիքավոր ու հականարտությունների արդյունքում տուժված բնակչության խմբերը ավելացրել են իրենց տնտեսական և սոցիալական արժեքները՝ կարողությունների լավացման, գիտելիքների և շուկայի հնարավորությունների ավելի լավ օգտագործման միջոցով:</p> <p>2. Մասնավոր և ֆինանսական հատվածների օրենսդրական պայմանները բարելավվել են:</p>	<p>1. Ազգային, տարածաշրջանային և տեղական կառավարական հաստատությունների կարողությունները բարելավվել են, որոնք ուղղված են խթանելու կայուն և ներառական տարածաշրջանային և տեղական զարգացմանը:</p> <p>2. Աղբյուրներում պետական ֆինանսական կառավարման և տնտեսական քաղաքականությունների թափանցիկության, արդյունավետության և կայունության բարելավում:</p> <p>3. Բոլոր երեք երկրներում ավելանում է ժողովրդավարական ստանդարտների հարգանքը և խթանվում և պաշտպանվում են մարդու իրավունքները՝ համապատասխան ազգային մեխանիզմների միջոցով:</p>	<p>1. Հականարտությունների արդյունքում տուժված կարիքավոր բնակչության խմբերի հիմնական մարդասիրական կարիքները բավարարված են և իրենց պաշտպանվածությունը բարելավվել է:</p> <p>2. Համապատասխան շահագրգիռ կողմերին երեք երկրներում հնարավորություն է տրվել կառուցողական կերպով աշխատել հականարտության վերափոխման ուղղությամբ:</p>
Ոլորտի ընդհանուր բյուջեն		
51 միլիոն շվեյցարական ֆրանկ	34 միլիոն շվեյցարական ֆրանկ	13 միլիոն շվեյցարական ֆրանկ

Տարանցիկ թեմաները / Մոտեցումը
Գենդեր, Կառավարում, Աղետների ռիսկերի նվազեցում, Հակամարտությունների մասին իրազեկ ծրագրի կառավարում
Երկրի գերակայությունները (հիմնական քաղաքական փաստաթղթերը)
<p>Հայաստան՝ 2008-2021թթ.. Կայուն զարգացման ծրագիր; 2010-2020թթ.. Գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագիր; 2012թ. Ազգային աղետների ռիսկերի նվազեցման ծրագիր; 2011-2015թթ.. Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների պլան:</p> <p>Ադրբեջան՝ 2008-2015թթ.. Աղքատության նվազեցման և կայուն զարգացման պետական ծրագիր; 2009-2013թթ.. Տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման պետական ծրագիր; 2011-2020թթ.. Կապիտալ շուկայի զարգացման պետական ծրագիր; 2020թ. Ադրբեջանի զարգացման հեռանկար:</p> <p>Վրաստան՝ 2010-2017թթ.. Վրաստանի տարածաշրջանային զարգացման պետական ծրագիր; 2012-2022թթ.. Վրաստանի գյուղատնտեսության զարգացման ծրագիր; 2012-2014թթ.. Ներքին տեղահանված ազգաբնակչությանը վերաբերվող գործողությունների ծրագիր; 2010թ. Բռնագրաված տարածքների մասին ծրագիր; 2011-2013թթ.. Գենդերային հավասարության իրականացման գործողությունների պլան:</p>

Յուրաքանչյուր ոլորտին վերաբերվող մանրամասն պլանավորված արդյունքները ներկայացված են առանձին բրոշյուրում:

Հավելված II Ֆինանսական պլանավորում

Ստորև ներկայացված աղյուսակները ներկայացնում են պլանավորված հատկացումները և պլանավորված նոր դրամաշնորհները յուրաքանչյուր ոլորտի համար 2013թ. հունվար ամսից մինչև 2016թ. դեկտեմբեր ամիսը՝ լիարժեք թվերով և տոկոսներով:

Պլանավորված հատկացումներն՝ ըստ յուրաքանչյուր ոլորտի

2013-2016թթ.. ընթացքում նախատեսված ընդհանուր հատկացումները շվեյցարական ֆրանկով (մինչև 2013թ. պլանավորված հատկացումները ներառյալ)						
Ոլորտ	ՇՋԳ-ի Տեխնիկական համագործակցություն	ՇՋԳ-ի Մարդասիրական օգնություն	ՏՀՊՔ	ՄԱԲ	Ընդամենը	%
Տնտեսական զարգացում և զբաղվածություն	38'500'000	3'150'000	9'800'000	-	51'450'000	46%
Կառավարում և պետական ծառայություններ	16'000'000	3'750'000	12'800'000	2'000'000	34'550'000	31%
Մարդու անվտանգություն և պաշտպանություն	-	8'850'000	-	4'000'000	12'850'000	12%
Ոչ հիմնական ծրագրերը և ՇՋԳ-ի կառավարման ծախսերը	6'770'000	3'600'000	1'870'000	-	12'240'000	11%
Ընդամենը	61'270'000	19'350'000	24'470'000	6'000'000	111'090'000	100%

Պլանավորված նոր հատկացումները՝ ըստ ոլորտների

2013-2016թթ. ընթացքում նախատեսված նոր հատկացումները շվեյցարական ֆրանկով (2016թ. հետո պլանավորված նոր հատկացումները ներառյալ)						
Ոլորտ	ՇՁԳ-ի Տեխնիկական համագործակ- ցություն	ՇՁԳ-ի Մարդասիրա- կան օգնություն	ՏՀՊՔ	ՄԱԲ	Ընդամենը	%
Տնտեսական զարգացում և զբաղվածություն	28'000'000	3'035'000	10'000'000	-	41'035'000	41%
Կառավարում և պետական ծառայություններ	16'000'000	3'602'000	13'000'000	2'000'000	34'602'000	34%
Մարդու անվտանգություն և պաշտպանություն	-	8'704'000	-	4'000'000	12'704'000	13%
Ոչ հիմնական ծրագրերը և ՇՁԳ- ի կառավարման ծախսերը	6'770'000	3'500'000	1'870'000	-	12'140'000	12%
Ընդամենը	50'770'000	18'841'000	24'870'000	6'000'000	100'481'000	100%

Տպագրություն

Խնբագիրներ`

Դաշնային Արտաքին գործերի բաժին ԴԱԳԲ
Քաղաքական հարցերով տնօրինություն ՔՀՏ
3003 Բեռն/Շվեյցարիա
www.eda.admin.ch

Դաշնային Արտաքին գործերի բաժին ԴԱԳԲ

Շվեյցարիայի Ջարգացման և համագործակցության գործակալություն ՇԶՀԳ
3003 Բեռն/Շվեյցարիա
www.sdc.admin.ch

Դաշնային Տնտեսական հարցերի, կրթության և հետազոտության բաժին ԴՏՀԿՀԲ

Տնտեսական հարցերով պետական քարտուղարություն ՏՀՊՔ
3003 Բեռն/Շվեյցարիա
www.seco-cooperation.admin.ch

Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակ

0179 Թբիլիսի, Վրաստան
www.swisscoop.ge

Դիզայն`

Տեսողական հաղորդակցություն ԴԱԳԲ
Լուսանկարներ`
ՔՀՏ, ՇԶՀԳ, ՏՀՊՔ

Կոնտակտներ`

Քաղաքական հարցերով տնօրինություն ՔՀՏ
Directorate of Political Affairs DPA
Bundeshaus West, 3003 Bern, pd@eda.admin.ch

Շվեյցարիայի Ջարգացման և համագործակցության գործակալություն ՇԶՀԳ

Անկախ պետությունների համագործակցության բաժին
Swiss Agency for Development and Cooperation SDC
Division Commonwealth of Independent States CIS
Freiburgstrasse 130, 3003 Bern, info@deza.admin.ch

Տնտեսական հարցերով պետական քարտուղարություն ՏՀՊՔ

Տնտեսական համագործակցություն և զարգացում
State Secretariat for Economic Affairs SECO
Economic Cooperation and Development
Holzikofenweg 36, 3003 Bern, info@seco-cooperation.admin.ch

Սույն տպագրությունը կարելի է գտնել հետևյալ կայքերում` www.sdc.admin.ch/publications
www.swiss-cooperation.admin.ch/southerncaucasus և www.seco-cooperation.admin.ch: